

ՌՈՒԲԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱՅԱՅՈՒԹՅՈՒՆԸ
20-րդ դարի սկզբին



✓


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՈՌԻՔԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

A II
86877

ԵՐԵՎԱՆ - 1999



93 (= 919,81)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու

Ռ.Օ. Սահակյան

Գասպարյան Ռ. Հ.

Կիլիկիահայությունը 20-րդ դարի սկզբին

Եր.: ՀԱՅԱԳԻՏԱԿ, 1999, 58 էջ

Գրքում Հայաստանի և Ռուսաստանի արխիվային վավերագրերի, հրապարակում եղած գրականության և մամուլի հիման վրա տրված են կիլիկիահայության մղած ազատագրական պայքարը 20-րդ դարի սկզբին, երիտթուրքական իշխանությունների քաղաքականությունը և 1909 թ. կոտորածները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ինքնապաշտպանական մարտերին, կիլիկիահայության կրած թվական և նյութական կորուստներին:

«ՀԱՅԱԳԻՏԱԿ» - 1999

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 1900-1908ԹԹ.

19-րդ և 20-րդ դարերի սահմանագիծը Թուրքիայում համիդյան բռնակալության, ազգայնամոլ քաղաքականության և ազգային հողի վրա տեղի ունեցող խժոժությունների առավել ծանր ժամանակաշրջանն էր: Մի կողմից Օսմանյան կայսրությունում նկատվում էր առևտրատնտեսական արտադրահարաբերությունների որոշակի աճ, շուկայական հարաբերությունների ձևավորում և հաստատում, բուրժուազիայի և բուրժուական գաղափարախոսության առաջացում, որը հետապնդում էր բռնատիրական նպատակներ՝ կամենալով վերացնել տնտեսական և մշակութապես առավել բարձր աստիճանի վրա կանգնած ժողովուրդների տնտեսական հզորությունը, մյուս կողմից՝ դա դեռևս քայքայված Թուրքիան էր, որն իր գոյությունը պահում էր հպատակ ազգերի և ազգությունների շահագործման ճանապարհով: Միով բանիվ՝ դա օսմանյան կայսրությունն էր, որը հին նպատակների իրագործման համար նոր միջոցներ էր փնտրում:

Դեռևս 1892 թ. հունիսին, անդրադառնալով Թուրքիայում տիրող ներքին վիճակին՝ «Լը Նորդ» թերթը նշել է. «Կ. Պոլսի գրավումից հետո անցել է 4,5 հարյուրամյակ, քաղաքակրթության փոքրագույն հետք իսկ չթողնելով ասիական քոչվորների ժառանգների վրա: Ինչպիսին նրանք եղել են վեց դար առաջ, երբ Թուրքեստանի լեռներում և հարթավայրերում իրենց գոյությունը պահպանում էին թալանի միջոցով, այնպիսին էլ մնացին մինչև օրս, երբ կոտորում ու կողոպտում են հազարավոր քրիստոնյանների, որպեսզի տիրանան նրանց ունեցվածքին»:¹

Այնուամենայնիվ, Թուրքիայում կային ուժեր, որոնք քննադատելով իշխանությունների վարած քաղաքականությունը, իրավացիորեն գտնում էին, որ քրիստոնյաների հալածանքը երկիրը կանգնեցնում է տնտեսական լուրջ դժվարությունների առաջ: Այսպես, թուրք քաղաքական գործիչ Ահմեդ Ռամզիի դիպուկ արտահայտությամբ՝ «Մեր քաղաքական իմաստուններին Ալլահը չի

¹ Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897, с. 126.

պարզեւել ոչ խելք, ոչ փորձ... Դրա համար էլ նրանք համոզված են, որ մուսուլմանների հիմնական սրբազան պարտականությունն է ոչնչացնել անհավատներին ամբողջ աշխարհում»:² «Սուլթանական կառավարության քաղաքականությունն էր իրեն հպատակ քրիստոնյաները տեղահանություններով ու ջարդերով միշտ ընկճել, որպէսզի անոնք չբարգավաճին ու օր մըն ալ գլուխ չբարձրացնեն կամ իրենց անկախության մասին չմտածեն»:³

Ամերիկացի Ջոն Մաքդոնալդն իր «Թուրքիան և արևելյան հարցը» աշխատության մեջ նկատել է. «Թուրքիան միայն մասամբ էր թուրքական, այն տարբեր ազգերի անկայուն մասսա էր կամ չորս անգամ ավել ազգային փոքրամասնություններ, քան «օկուպացիոն բանակը», որին նրանք ենթակա էին: Այնպես որ թուրքական դեսպանը ներկայացնում էր միայն թուրքերին և ոչ երբեք հպատակ ժողովուրդներին, որոնց միակ իղձը «օկուպացիոն բանակից» ազատվելն էր»:² Այս խոսքերում փաստորեն արտացոլված էր 20-րդ դարի սկզբին օսմանյան կայսրությունում տիրող քաղաքական իրավիճակը:

Աբդուլ Համիդ 2-րդ սուլթանի օրոք (1876-1909թթ.) կառավարող վերնախավի գաղափարախոսությունը դարձավ պանիսլամիզմը (համախալամականություն): Ու Ղևիտոնն իրավամբ նկատել է, որ սուլթան Համիդը, լինելով իսլամական աշխարհի խալիֆը, մեծ նշանակություն էր տալիս «իսլամական համախմբվածության» կոչին, որն ինքնին սպառնում էր Թուրքիայում քրիստոնյա ազգերի գոյությանը:³ «Իսլամական համախմբվածությունը նշանակում էր սուլթանի գլխավորությամբ իսլամ դավանող բոլոր ժողովուրդների միավորում մեկ պետականության ներքո: «Եթե իսլամիզմը օսմանյան կայսրությունում ուղղված էր քրիստոնյաների, հատկապես հայերի դեմ,- գրել է Հ. Սիմոնյանը,- ապա կայսրությունից դուրս այն պանիսլամիզմի տեսքով ուղղվեց Ռուսաստանի դեմ, որի կազմում էին հիմնականում գտնվում կայսրությունից դուրս բնակվող թուրքալեզու

² ՀՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, N 7, էջ 38:

¹ Ֆայեզ էլ Ղոսեյն, Չերոսական հայության անցյալն: Ջարդերը Հայաստանին մեջ, Կահիրե, 1960, էջ 2:

² J. Macdonald, Turkey and the Eastern Question, London-New York, 1919, p. 11.

³ R. H. Davison, The Modern Nations is Historical Perspective. Turkey, New jersey, 1968, p. 94.

մուսուլման ժողովուրդները»:⁴ Բայց այն բախվում էր Թուրքիայից դուրս բնակվող մահմեդական ժողովուրդների շահերին, քանզի «Մահմեդականները շատ լավ գիտեին, որ հոգևոր առաջնորդի դերում սուլթանների նպատակն է թուրքական պետականության պահպանումը և ընդարձակումը»:⁵

Աբդուլ Համիդի կառավարման տարիները, Օսմանյան Թուրքիայի, այդ թվում և Կիլիկիայի տարածքում ապրող հայության համար ծանր, դժբախտություններով ու արհավիրքներով առլեցուն տարիներ էին: Օգտագործելով մեծ տերությունների հակամարտությունները, սուլթանը ոչ միայն չիրագործեց 1895թ. մայիսյան բարենորոգումների ծրագիրը, այլև սկսեց վարել առավել ընդգծված հակահայկական քաղաքականություն, ուժեղացրեց քաղաքական, տնտեսական և մշակութային ճնշումը հայության նկատմամբ՝ ցանկանալով արմատախիլ անել արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները:

Սուլթան Համիդի վարչակարգը վարում էր Կիլիկիան Արևմտյան Հայաստանից տնտեսապես, քաղաքականապես, գաղափարապես անջատելու քաղաքականություն: Չցանկանալով թուլատրել հայության տարբեր հատվածների շփումները, որոնք կխթանեին ազգային պայքարը, Օսմանյան կառավարությունն օգտվում էր Կիլիկիայի՝ Արևմտյան Հայաստանից բաժանված լինելու հանգամանքից և հետամուտ էր այնտեղ ապրող հայության մեկուսացմանը:

Դարասկզբին Կիլիկիահայության վիճակն ավելի է ծանրանում: Ցարական Ռուսաստանի գաղտնի խորհրդական Գրիգորևիչը 1900 թ. սեպտեմբերի 26-ին Հալեպից հաղորդում է, որ հուլիսին Հալեպի նահանգապետ է նշանակվել «քրիստոնյաների նկատմամբ ծայրահեղ դաժան վերաբերմունքով հայտնի» Անիս փաշան, որից հետո քրիստոնյաների, մասնավորապես հայերի վիճակը վատացել է: Խորհրդականը նշում է, որ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի դեսպաններն այդ առթիվ բողոքել են Բ. Դաշանը և իրենց հյուպատոսներին հանձնարարել են հարաբերություններ չհաստատել նոր վալու հետ: Հալեպի գլխավոր հյուպատոսին նման հանձնարարական էր

⁴ Զր. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 132:

⁵ Գ. Բիրբյուխեր, Армения 1915. Уничтожение Турцей культурного народа. Ереван, 1991, с. 25.

հղել նաև Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ի. Ջինովկը: Այնուամենայնիվ, սեպտեմբերի 19-ին սուլթանական իրադեն (իրավարտակ) Անիս փաշային հաստատում է վալիի (նահանգապետի - Ռ. Գ.) պաշտոնում, որը երիցս ծանր անդրադարձավ տեղի քրիստոնյա ազգաբնակչության վրա: Գրիգորիչն անում է հետևյալ ճիշտ եզրահանգումը. «Թվում էր, թե Անիս փաշային Հալեպում թողնելը, որտեղ դեռ թարմ են հիշողությունները Ձեյթունի և Ուրֆայի մասին, կարող է լուրջ վտանգ ներկայացնել անպաշտպան քրիստոնյա ազգաբնակչության դեմ մահմեդականների կրոնամոլության բռնկման համար և առաջին իսկ հարմար դեպքում առաջ բերել քրիստոնյաների զանգվածային կոտորած»:¹ Եվ իրոք, արդեն նոյեմբերի 12-ին ցարական զադունի խորհրդական Լիշինի հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ «Հյուսիսային Միջագետքում մահմեդականների կրոնամոլությունը քրիստոնյաների դեմ նկատելիորեն գրգռված է»: Առկա էր ջարդի սպառնալիքը՝ հողի ահավոր ու անկանխատեսելի հետևանքներով: Հնարավոր սպանող կանխելու միտումով Միջերկրական ծովում ռուսական նավատորմի փոխծովակալ Գիրիլևի հրամանով ռուսական ռազմանավերը խարխիս գցեցին Տրիպոլիում, Լաթաքիայում և Աքքայում, իսկ ֆրանսիական նավատորմը մոտեցել էր Մերսին նավահանգստին: Այս հանգամանքը նկատելիորեն նպաստեց կրքերի հանդարտեցմանը:² Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ Աբդուլ Համիդի կողմից Կիլիկիայում ու հարակից շրջաններում ծրագրված, դանդաղ ու զգույշ կազմակերպվում էին հայկական նոր կոտորածներ: Եվ դա պատահական չէր: Ինչպես հայտնի է, Կիլիկիահայությունը գերծ էր մնացել 1890-ական թթ. ջարդերից, իսկ Կիլիկիայի որոշ շրջաններ (Ձեյթուն, Դյորթ-Յոլ, Սուետիա և այլն) կազմակերպված ինքնապաշտպանության շնորհիվ փրկվել էին թուրքական իշխանությունների և ավագակաբարո խուժանի մոլեգին կրքերից: Դա էր պատճառը, որ Կիլիկիան տնտեսապես ավելի զարգացած էր, քան Արևմտյան Հայաստանը և հայաբնակ այլ շրջաններ: Չհանդուրժելով այս հանգամանքը 1890-ական թթ. վերջերից արդեն սուլթանը հուզումներ ու ջարդեր էր նախապատրաստում Կիլիկիայում: Համիդի պաշտոնյաները, օգտվելով նրա աջակցությունից և, անկասկած, գործելով նրա հրահանգներով, բորբո-

¹ Архив внешней политики России (далее - АВПР), ф. Политархив, Азиатский департамент, г. 1900, д. 997, л. 231.

² Նույն տեղում, ք. 304:

քում էին մահմեդական մուլեռանդ ամբոխի կրքերը, թշնամանք սերմանում հայերի և քրիստոնյաների դեմ: Այս ամենը կազմակերպելու համար Անիս փաշան, հարկավ, բազմափորձ ու պիտանի պաշտոնյա էր, և սուլթանը բնավ չէր կարող համաձայնել նրան նահանգապետությունից ազատելու պահանջի հետ:

Կիլիկիայի հայության գլխին նոր ամպեր էին կուտակվում:

Նրա և այլ շրջանների հայության միջև առաջին սեպը խրելու նպատակով սուլթանը հարվածեց հայ եկեղեցուն: Համիդն ամենագործուն մասնակցությունը բերեց Կիլիկիայի (Սսի) կաթողիկոսի ընտրությանը, ընդամին՝ ցանկանում էր Սսի կաթողիկոսությունը դուրս բերել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ենթակայությունից: Դա կոպիտ և մինչ այդ չեղած միջամտություն էր հայ եկեղեցու ներքին գործերին: Սուլթանի հիմնական նպատակն էր լիովին առանձնացնել, մասնատել Կիլիկիան՝ այնտեղ քաղաքական, տնտեսական, մշակութային և կրոնական ճնշումն ուժեղացնելու և հայերի գերիշխող դիրքը վերացնելու համար: Որպես բողոքի նշան Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանը 1900 թ. մարտին հրաժարական տվեց: Սուլթանը դադարեցրեց կաթողիկոսական ընտրությունները և արդարադատության նախարար Աբդուրահման փաշային հանձնարարեց փոխադարձ զիջումների ճանապարհով ետ պահել պատրիարքին իր մտադրությունից: Սակայն վերջինս հաստատական էր իր որոշման մեջ. կամ սուլթանը վավերացնում է հրաժարականը, կամ հրաժարվում Կիլիկիո կաթողիկոսությունը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ենթակայությունից դուրս բերելու ծրագրից: Ավելին, Մ. Օրմանյանը Համիդից պահանջեց վերացնել հայերից գանձվող անօրինական հարկերը և նրանց դեմ կիրառվող տարբեր պատժամիջոցները: Նա միամտորեն հույս էր տածում, թե հասարակական կարծիքը և Արևելքի քրիստոնեական համայնքները հանդես կգան իր արդար դատի պաշտպանությամբ:¹

Այս միջադեպը սուլթանի վարչակարգի կողմից կոպիտ միջամտության ընդամենը մեկ օրինակ է: Խնդիրն ավելի էր բարդանում նրանով, որ Սսի կաթողիկոսական աթոռը օգտվում էր եկեղեցական որոշ իրավունքներից, որոնցից զրկված էին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին ենթակա Աղթամարի կաթողիկոսությունը և Երուսաղեմի պատրիարքությունը: Այդ պատճառով էլ, ինչպես նշել է Կ. Պոլսի ռուսական դեսպան Ի. Զինովկը Ռուսաստանի արտաքին

¹ АВГР, ф. Политархив, Азиатский департамент, г. 1900, д. 998, л. 465.

գործերի նախարարությանն ուղղված հաղորդագրության մեջ, Սսի կաթողիկոսները բազմիցս փորձել են ոչ միայն դուրս գալ Կ. Պոլսի պատրիարքարանի հովանավորությունից, այլ նույնիսկ համաձայնել են չընդունել էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությունը: Մի բան, որ, հասկանալի պատճառներով, հրահրվում և հովանավորության էր արժանանում օսմանյան կառավարության կողմից: Իրավացի էր դեսպան Ի. Ջինովկը, որ Սսի կաթողիկոսության ինքնավարության հաստատմամբ Բ. Դուռը հետամուտ է կիլիկիահայերի և, ընդհանրապես, արևմտահայերի շրջանում էջմիածնի կաթողիկոսության, միաժամանակ՝ ռուսական կառավարության ազդեցության թուլացմանը:¹

Այդ վեճը Սսի կաթողիկոսության և Կ. Պոլսի պատրիարքարանի միջև սկսվել էր 1894 թ., երբ մահացել էր Կիլիկիո կաթողիկոս Մկրտիչ Քեֆսիզյանը: Չհաստատելով նրա երկու անմիջական ժառանգորդներին, Բ. Դուռը պահանջեց նոր ընտրություններ անցկացնել: Ընդունված կարգի համաձայն՝ կաթողիկոսի թեկնածուների ցուցակը պետք է հաստատվեր Կ. Պոլսի պատրիարքի և Հայոց Ազգային ժողովի կողմից, մինչդեռ Բ. Դուռը պահանջեց, որ այն նախօրոք հաստատվի իր կողմից:

«Կառավարությունը նպատակ ուներ Կիլիկիո կաթողիկոսությունը անկախ ճանաչել Ազգային պատրիարքարանե. զենք մը պետք էր ինձ կամ հենարան մը գոնե, որով կարենայի այս պառակտման դեմ առնիլ և պաշտպանվիլ», - Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հետ իր մտորումներն է կիսել Մ. Օրմանյանը:²

Կաթողիկոսի ընտրությունները նշանակվել էին 1900 թ. մարտի 10-ին: Ցանկություն հայտնելով, որ դրանք ղեկավարելու համար պատրիարքն Ադանա ուղարկի իր պատվիրակին՝ Բ. Դուռն իր հերթին, ընտրությունները վերահսկելու հանձնարարականով, այնտեղ ուղարկեց իր ներկայացուցիչ Բեհա բեյին: Ժամանելով Ադանա՝ վերջինս իսկույն մեկուսացրեց պատրիարքարանի ներկայացուցիչ Սահակ եպիսկոպոսին: Դա առաջացրեց Մ. Օրմանյանի բուռն զայույթը և վերստին հանգեցրեց նրա հրաժարականին: Սուլ-

¹ АВПР, ф. Канцелярия МИД, оп. 470, г. 1900, г. 27, л. 280.

² ՀՀ Կենտրոնական պետական պատմության արխիվ (այսուհետև՝ ԿՊՊԱ), ֆ. 57, ց. 1, գ. 355.

թ. 2:

թանը հարկադրված դադարեցրեց ընտրությունները:³ Այս խնդրի շուրջ ծագած հակասությունները սուլթանի և պատրիարքի միջև շարունակվեցին 2-3 տարի: Մ. Օրմանյանը Խրիմյան Հայրիկին հղած նամակում գրում է. «Բ.Պոռը ուզում է Կիլիկիան պատրիարքութենէ բաժնել, և ինքնագլուխ նկատել, և պատրիարքի որևէ միջամտություն չնշել, այս պատճառով է, որ Կիլիկիո սահմանին մէջ ոչ առաջնորդ կրնանք դրկել և ոչ տեղապահ... Կիլիկիո ինքնագլխությունը վերահաս վտանգ մըն է...»:⁴ Ի վերջո հարցը լուծվում է հօգուտ հայ եկեղեցու միասնության:

Կրոնական ճնշման հետ մեկտեղ ահավոր չափերի է հասնում ազգային հալածանքը: Ռուսական դեսպանի հետ գրուցելիս Մ. Օրմանյանը կսկիծով հայտնել է, որ «Թուրքիայում... խաղաղ կյանքը հայերի համար անհնար է դարձել»: Նույնն է հավաստում նաև դեսպանն իր հաղորդագրությունում, ըստ որի «թուրքահայերի դրությունը ծայրահեղ վատ է»:¹ Վերստին միջազգային դիվանագիտության ասպարեզ բարձրացված Հայկական հարցի վերացումը արյունոտ սուլթանը տեսնում էր հայերի նկատմամբ ազգային հալածանքի և քաղաքական ճնշման բազմաբնույթ միջոցների կիրառման մէջ: «Ամբողջ հայ ժողովուրդը վախի և սարսափի իշխանության մը տակ կապրեր, Թուրքիան կատարյալ դժոխքի կերպարանքն ստացել էր»:² Բավական է նշել, որ դժոխային պայմանների պատճառով 1870-1913 թթ. Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից արտագաղթել էր ավելի քան 150.000 հայ:³

Այս պայմաններում, ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, լայն ծավալ ստացան ազատագրական շարժումները: Հայ քաղաքական կուսակցություններից Կիլիկիայում մեծ ազդեցություն ուներ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը: Իր ժամանակի համար և տվյալ իրավիճակում հնչակյանները պատմականորեն առաջադիմական գործունեություն էին ծավալել. նրանք ձգտում էին վառ պահել ազատագրական պայքարի կրակը, կոնկրետ ուղղություն տալ պայքարի ընթացքում ծնվող տարերային շարժումներին ու գաղափարներին: Հնչակյանների մի մա-

³ АВІР, ф. Канцелария МІА, оп. 470, г. 1900, г. 39, л. 251.

⁴ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 321, ք. 26-27:

¹ АВІР, ф. Канцелария МІА, оп. 470, г. 1900, г. 39, л. 250-251.

² Մ. Ճիզմեճյան, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 9:

³ Ս. Պողոսյան, Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1987, էջ 129:

սը, համաձայն չլինելով Ա. Նազարբեկյանի հայացքներին և Թուրքիայում սոցիալիստական գաղափարախոսության քարոզչությունը համարելով վաղահաս, դեռ 1896 թ. Լոնդոնի համաժողովում Մ. Տամաթյանի, Լ. Մկրտչյանի, Ա. Արփիարյանի, Ս. Սուրենյանի գլխավորությամբ ստեղծել էին առանձին կենտրոնական վարչություն հիմք դնելով Վերակազմյալ հնչական կուսակցությանը: «Անգամ մը ևս ընկերավարականությունը կը նկատվի ավելորդ ու վնասակար տաճկահայ դատին համար, քանի որ Թուրքիո մեջ եվրոպական իմաստով ոչ քափիթալ և ոչ ալ պրոլետարիատ գոյություն ունեին, այլ կային տաճիկը և հայը դեմ առ դեմ, մեկը տիրող, կոտորող ու թալանող, իսկ մյուսը՝ ստրուկ, կոտորվող ու նահատակվող»:¹ Եվ դա էր իրականությունը: Թուրքիայում չէր կարելի խոսել կազմակերպված բանվորական շարժման մասին: Այն փոքր ինչ աշխուժացավ միայն 20-րդ դարի սկզբին, մասնավորապես 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից առաջ և հետո, սակայն շարժմանը խոչընդոտում էին մի շարք գործող հանգամանքներ: Այն երբեք չէր կարող միասնական լինել, քանզի թուրքական ազգայնամոլությունը, քրիստոնյաներին իրավագուրկ հպատակ համարելը երբեք չէին կարող երաշխիքներ ստեղծել տարբեր ազգերի համատեղ պայքարի համար: Համատեղ աշխատանքում ձեռք բերված քիչ թե շատ համերաշխությունն էլ խախտվում էր օսմանյան կառավարության ազգահալած քաղաքականության, տնտեսական և քաղաքական ճնշումների, զանգվածային ջարդերի հետևանքով: Եվ պատահական չէ, որ այդ տարիներին հպատակ ժողովուրդների գյուղացիական և բանվորական շարժումները ազատագրական պայքարի բնույթ էին կրում: Նույնիսկ Կիլիկիայում, որն իր բարենպաստ աշխարհագրական դիրքով Թուրքիայի տնտեսապես բարվոք շրջաններից էր, փոքրիշատե զարգացած արդյունաբերությամբ, բանվորական շարժում, որպես այդպիսին գոյություն չուներ: Կիլիկիահայությունը (և օրամշակներն ու բանվորները, և՛ գյուղացիությունը) ըմբոստանում էր քաղաքական և ազգային ճնշումների, կառավարության հարկային քաղաքականության դեմ: Ժողովրդական հուզումները ճնշվում էին ամենայն դաժանությամբ: Արխիվային մի վավերագրի վկայությամբ՝ Ադանայում բազմաթիվ հայեր մահացել են բանտերում՝ ենթարկվելով տոսկալի տանջանքների, «իսկ մասնակի սպանություններին, կանանց բռնաբա-

¹ Մ. Ճիզմենյան, նշվ. աշխ., էջ 67:

րություններին, հայ գյուղերն ավերելուն հաշիվ չկա»:²

Հայ քաղաքական կուսակցությունները առաջնահերթ ուշադրություն էին դարձնում զենքի, զինամթերքի, դրամական միջոցների հայթայթմանը, զինված խմբեր էին կազմում և ուղարկում Արևմտյան Հայաստան ու Կիլիկիա, Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված բարենորոգումների ծրագիրը կենսագործելու խնդրանքով դիմումներ և աղերսագրեր հղում մեծ տերություններին, ինչպես նաև իրենց նպատակների մասին տեղյակ պահում համաշխարհային հասարակայնությանը: Ջանքեր, որոնք ապարդյուն չանցան և մասամբ արևմտահայության վրա բևեռեցին միջազգային առաջադեմ հասարակական-քաղաքական ուժերի և կազմակերպությունների ուշադրությունը: Հարկավ, նաև այս բարոզչության շնորհիվ էր, որ Հայկական հարցը միջազգային ճանաչում էր ստացել: 1901 թ. Խաղաղության միջազգային բյուրոն Բեռնում (Շվեյցարիա) միջազգային հասարակայնության ուշադրությունը հրավիրեց Հայկական հարցի վրա և Բեռլինի պայմանագիրը ստորագրած պետություններին կոչեց իրագործել 61-րդ հոդվածը: Հայ Դատի պաշտպանության դիրքերում հանդես էին գալիս Ժան Ժորեսը, Ֆրանսիս դը Փրեսանսեն, Անատոլ Ֆրանսը, Պիեռ Բիյարը (հրատարակում էր "Pro Armenia" լրագիրը) և ուրիշներ: 1907 թ. հուլիսի 4-7-ը Բոյուսելում տեղի ունեցավ միջազգային կոնֆերանս՝ նվիրված Հայկական և Մակեդոնական հարցերի պաշտպանությանը: Մոտ 150 մասնակիցներ պահանջում էին, որ իրենց կառավարությունները սուլթանին հարկադրեն կենսագործել բարենորոգումների ծրագիրը: Հայկական հարցի պաշտպանության նպատակով կազմվեց միջազգային հանձնաժողով (Ֆր. Փրեսանսե, Սամբա, Ավ. Բեբել, Ջ. Բրայս, Է. Ֆերրի և այլք):¹ Կարևոր էր այն, որ նրանք ճիշտ էին ըմբռնում հայ ազգային-ազատագրական շարժման նպատակները և բարձր էին գնահատում այն:

Ինչ վերաբերում է մեծ տերություններին, ապա նրանք օսմանյան բռնակալության ներքո հեծող ժողովուրդների ազատագրական շարժումներն օգտագործում էին շահադիտական նկատառումներով: Եվրոպական պետությունները ձգտում էին Թուրքիայում հաստատվել նախ՝ տնտեսապես, ապա՝ քաղաքականապես: Հանուն այդ նպատակի Եվրոպան բազմիցս օգտագործել էր ճնշված

² ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 390, ք. 7:

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 477-479:

ժողովուրդների, նաև՝ հայերի ազատագրական շարժումները: Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի՝ 1904-1907 թթ. Եվրոպային ուղղված բազմաթիվ դիմումները ծառայեցվում էին սոսկ Հայկական հարցի, հայերի դրության բարելավման շուրջ աղմուկ բարձրացնելուն և Թուրքիայից նոր գիշումներ կորզելուն:

Ազատագրական շարժումը Հայաստանում որոշակի համակրանքի էր արժանացել հույն հասարակական մտքի կողմից: Ռաբացատրվում էր հույն-թուրքական դարավոր հակամարտություններով: Վերջին դերը չէր խաղում և այն հանգամանքը, որ հազարավոր հույներ հեծում էին թուրքական դժնդակ տիրապետության ներքո: Սակայն դարասկզբին հունական կառավարությունը զգույշ վերաբերմունք էր դրսևորում Հայկական հարցի, հայ ազատագրական շարժումների նկատմամբ, քանզի հայ-բուլղարական համագործակցությունը բացասաբար էր անդրադառնում Հունաստանի պաշտոնական քաղաքականության վրա: Հունական կառավարության կարծիքով, անժամանակ ապստամբական շարժումները կարող էին հանգեցնել Արևելքում ոչ հոգուտ Հունաստանի քաղաքական իրադրության փոփոխության: Հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքում կարևոր դեր էր խաղում նաև հայ և հույն բուրժուազիայի մրցակցությունը: Եվ հունական կառավարությունը երբեմն հանդես էր գալիս ի պաշտպանություն հայերի, հաճախ էլ չեզոք դիրք զրավում:

1905 թ., երբ սրվել էին հույն-բուլղարական հակասությունները Մակեդոնիայի և հույն-թուրքական հարաբերությունները Կրետե կղզու պատճառով, Թուրքիայի ճնշմամբ հունական կառավարությունը ձերբակալեց բազմաթիվ դաշնակցականների, որոնք Մարսելից գեներ էին բերել Պիրեյ Ջնյունիա և այլ շրջաններ տեղափոխելու համար: Սակայն շուտով, հունական հասարակական մտքի ճնշման տակ, բանտարկյալներն ազատ են արձակվում:

Բալկանյան պատերազմների ժամանակ հունական կառավարությունը պաշտոնապես սկսեց աջակցել արևմտահայությանը (մասնավորապես՝ կիլիկիահայությանը), որին դիտում էր որպես իր բնական դաշնակիցը Թուրքիայի դեմ պայքարում: Պետական մակարդակով աջակցությունը առավել շոշափելի դարձավ Վենիզելոս էլեֆտերիոսի վարչապետության տարիներին (1910-1915 թթ.), երբ հունական կառավարությունը հետևողականորեն հանդես էր գալիս հույն-հայկական համագործակցության օգտին: Առանձնապես սերտ

հարաբերություններ էին հաստատվել կիլիկիա հայության հետ: Հայտնի է, որ 1913 թ. Հունաստանից 3000 միավոր զենք էր առաքվել Ջեթրուն:¹

Հայ ազատագրական շարժումը սկզբից ևեթ դժգոհություն էր հարուցում երիտթուրքերի շրջանում: Չնայած նրանք ամենուրեք թմբկահարում էին ժողովուրդների իրավահավասարության, ժողովրդավարական կարգեր ստեղծելու, հանուն այդ նպատակի բոլոր ուժերի համախմբման և սուլթանական վարչակարգի դեմ պայքարի անհրաժեշտության մասին, սակայն չէին ընդունում, որ հպատակ ժողովուրդների պայքարը նպատակաուղղվի իրենց թուրքերի իշխանությունը թոթափելուն: Այսպես, երիտթուրքական «Մեշվերեթի» թերթի խմբագիր Ահմեդ Ռիզան «Հայկական կոչը» հոդվածում (1906 թ. հոկտեմբերի 1) հայ ազատագրական շարժումները, կուսակցությունների գործունեությունը որակավորում էր որպես «հարված երկրին», «անարդար առեւտրություն դեպի թուրքերը»:¹

1890-ական թթ. կեսերից, մասնավորապես Ջեթրունի և այլ վայրերի հերոսական պայքարից հետո, տեսնելով կարող ուժերի առկայությունը՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը սկսեց զգալի ուշադրություն դարձնել Կիլիկիային՝ ցանկանալով այնտեղ ևս տարածել իր գաղափարական ազդեցությունը: «Հ. Յ. Դաշնակցության վարիչները չէին կարող անտեսել հարուստ երկրամասի աշխարհագրական դիրքը, որը մեծապես առավելություններ կընձեռեր ապստամբական ձեռնարկներու համար: Անոնք գիտեին, թե որքան համեմատաբար ոյուրին էր այդ վայրերուն մեջ դուրսէն ներս մտցնել զենք ու ռազմամթերք, շնորհիվ ծովի ու Եվրոպայի մերձավորության և թե որքան արագությամբ արծաքանք կը գտնեին Եվրոպայի մեջ Ջեթրուն և այլուր կատարված դեպքերը», - գրում է Մ. Վարանդյանը: Ուստի զարմանալի չէ, որ 1898 թ. վերջերին տեղի ունեցած ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովը «աչքի առաջ ունենալով Լեռնավայրի (Լեռնային Կիլիկիայի - Ռ.Գ.) անառիկ դիրքը, տեղական ժողովրդի հեղափոխական ուժը և ընդհանրապես մյուս հարմարություններն ու առավելությունները, որոշեց լուրջ ուշադրություն դարձնել այդ կետի վրա և այնտեղ ուղարկել կազմակերպող - ղեկավար մի ուժ»: Մեկ տարի անց կուսակցության 3-րդ Ընդհանուր ժողովը որոշում է Կիլիկիան ընդունել «որպես Սասնո համարժեք կեդրոնաց-

¹ Армянский вопрос, энциклопедия, Ереван, 1991, стр. 155.

¹ Տես Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 485:

ման վայր», և այնտեղ աշխատանքներ ծավալելու, հեղափոխական և ազատագրական գաղափարներ տարածելու, ազատագրական շարժումները ղեկավարելու համար հատկացնում է համապատասխան ֆինանսներ, ապա, անդամությամբ Հրաչի (Թիրաքյան) և Մարի (Միքայել Մարտիրոսյան) կազմվում է Կիլիկիո Պատասխանատու մարմինը:²

Դեռևս 1898 թ. նոյեմբերին բուլղարական անցագրով Մարը անցել էր Կիլիկիա և սկսել կազմակերպչական աշխատանքները: Սակայն, կարճ ժամանակ անց, նա ձերբակալվում է և վեց տարի հետո, հաշմանդամ դարձած, դուրս գալիս բանտից: 1900 թ. ՀՅԴ Կիլիկիայի Պատասխանատու Մարմնի կողմից Կիլիկիա է ուղարկվում Ռահվերը, որը Հրաչ Թիրաքյանի հետ Շրջանային ժողովի անցկացումից հետո ձեռնամուխ է լինում մարտական խմբերի ստեղծմանը: Քարոզչական գործունեություն ծավալելու համար Ջմյուռնիա է անցնում Հ. Թիրաքյանը, սակայն տեղի հայերից Կիլիկիայի համար բռնի հանգանականություն կատարելուց հետո անսպասելի ձերբակալվում է թուրքական իշխանությունների կողմից:

1902 թ. Ալեքսանդրետում տեղի ունեցած Շրջանային ժողովը որոշում է ավելի մեծ ուշադրություն դարձնել Ջեյթունին և այնտեղ է ուղարկում Լևոն Սամուելին՝ քաջամարտիկ լեռնականների տրամադրությունները շոշափելու համար:¹

1904 թ., համաձայն Սոֆիայի Ընդհանուր ժողովի որոշման, Կիլիկիան ուսումնասիրելու, տեղական մթնոլորտին ծանոթանալու, Դաշնակցության գաղափարները տարածելու հանձնարարականով այնտեղ են անցնում Սիմոն Ջավարյանը և Խանասորա Վարդանը: Հարկ է նշել, որ Ս. Ջավարյանն առանձնահատուկ նշանակություն էր տալիս Կիլիկիայում ապստամբական շարժումներին, որի հետ էր կապում Եվրոպայի միջամտության հույսը, քանզի եվրոպական տերությունները «այդտեղ ահագին տնտեսական ու կուլտուրական շահեր ունեն», հետևաբար շահագրգռված են երկրամասում կայունության և խաղաղության պահպանմամբ, և արդյունքում Կիլիկիայում կհաստատվի «եվրոպական կոնտրոլ»:² Սակայն Դաշնակցությանը չի հաջողվում կուսակցական կազմակերպությունների քիչ թե շատ լայն ցանց ստեղծել այստեղ:

² Ս. Վարանդյան, Դ. Յ. Դաշնակցության պատմություն, Երևան, 1992, էջ 458-459:

¹ Նույն տեղում, էջ 460-461:

² Նույն տեղում, էջ 467:

Ինչպես արդեն նշել ենք, Կիլիկիայում առանձնապես մեծ էր Հնչակյան կուսակցության հեղինակությունը: Պա պայմանավորված էր այն զգալի դերով, որ կատարել էին այդ կուսակցության անդամները 1890-ական թթ. Կիլիկիայում ինքնապաշտպանական մարտերի կազմակերպման ուղղությամբ: Ղեկ 1895 թ. հնչակյան գործիչների մի խումբ (Աղասի, Ապահ, Մլեհ, Կարո, Եփրեմ, Ժիրայր, Կահան, Շավարշ, Մուրադ, Մխո Շահեն և այլք), թվով 21 մարդ, Կիպրոսից Կիլիկիա էին անցել: Նրանց ծավալած հայրենամարտի գործունեությունը ցույց տվեց իր պտուղները. 1895-1896 թթ. կոտորածների ժամանակ նրանք զինեցին ժողովրդին և տեղի գործիչների հետ կազմակերպեցին ու ղեկավարեցին Զեյթունի, Ֆռնուզի, Զորք-Մարգվանի, Այնթափի, Ուրֆայի, Հաճընի հերոսամարտերը:

Սակայն հնչակյաններն այստեղ բախվում էին հայ հասարակական և կրոնական որոշ ուժերի, որոնք զուցե անկեղծորեն մոլորված լինելով և կարծելով, թե հեղափոխական, ազատագրական գաղափարների տարածումը սուլթանական բռնատիրությանը առիթ կընձեռի հայերի հետ հաշվեհարդար տեսնելու, ամեն կերպ արգելքներ էին հարուցում քաղաքական կուսակցությունների գործունեության համար: Այսպես, հայտնի է, որ հոգևոր որոշ գործիչներ կոչ էին անում չկարդալ «Արմենիա», «Մշակ» և «Հնչակ» թերթերը՝ որպես վնասակար գաղափարներ պարունակող մամուլ և նույնիսկ Ռաֆֆու ստեղծագործությունները:¹

Պարասկզբին Կիլիկիայում ազատագրական շարժման պայծառ դեմքերից էր հայտնի հայդուկ Ժիրայրը (Կարապետ Մխճյան, ծնվ. Կիլիկիայի Կոկիսոն գյուղում 1869 թ.), մի գործիչ, որը հեղափոխական պայքարի նշանակալից ուղի էր անցել: Այս գործին անդամագրվելով 1895 թվականից՝ նա գնացել էր Կովկաս, որտեղից 1896 թ. դեկտեմբերի 18-ին մշեցի Պետրոսի «Ձիմակիր» խմբի կազմում անցել էր «Երկիր», ուր և ստացել էր մարտական մկրտությունը: Նրան և Սեբաստացի Մուրադին էր հանձնված Կարսի զենքի բոլոր պահեստների հսկողությունը: Լինելով կիլիկեցի՝ Ժիրայրը ցանկանում էր գործել այնտեղ և գտնում էր, որ թուրքական տիրապետությունից ազատվելու, ժողովրդին փրկելու միջոցը համաժողովրդական պայքարն է: Ժիրայրի համոզմամբ, Կիլիկիայում այն պետք է սկսվեր Զեյթունից, որտեղ դրա համար պարարտ հող կար: Եվ իրոք, Եթե Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքարի կենտրոնը

¹ Մ. Ճիգմեճյան, նշվ. աշխ., էջ. 30:

Դուրան-Բարձրավանդակն էր (Մուշ, Սասուն, Տարոն), ապա կիլիկիահայության ազատամարտի միջնաբերդը Ջեթունն էր, որը կարող էր դառնալ երկրամասի դիմադրական շարժման կենտրոնը:

Ժիրայրն անհրաժեշտ էր համարում ինքնապաշտպանական, կամավորական խմբերի ստեղծումը, որոնց նպատակը պետք է լիներ հայաբնակ շրջանները փրկել թուրք, քուրդ ավարառուների կողոպուտից ու թալանից, մարտական ուժ և ոգի ներարկել ժողովրդին, զինավարժություն սովորեցնել: Ժիրայրի հայրենանվեր գործունեությունը, ցավոք, կիսատ է մնում: 1906 թ. Կիլիկիայում նա ձերբակալվում է և ազատվում 1908 թ., երիտթուրքական կեղծ սահմանադրության հռչակումից հետո: Նա իր մահկանացուն կնքում է 1909 թ. ապրիլին, Ադանայի կոտորածների ժամանակ՝ հերոսաբար մաքառելով թշնամիների դեմ:¹

Նույն ժամանակամիջոցում Ջեթունում գործում էր հնչակյան Կահեն (Ալեքսան Արզայան), որն ավելի ուշ անցնում է Ամերիկա:²

Ջեթունի նշանակությունը կիլիկիահայության ազատագրական պայքարում հիմնալի գիտակցում էին և թուրք իշխանավորները: Աննկուն լեռնականներին կոտորելու համար նրանք այստեղ առանձնակի ճնշումներ էին գործադրում, որն էլ հարուցում էր տեղի հայության ընդվզումը: Հայտնի է, որ չդիմանալով բռնություններին, մի խումբ գեթունցիներ 1904-1905 թթ. արտագաղթել էին Արևելյան Հայաստան և իրենց ծանր վիճակի վրա հրավիրել Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի ուշադրությունը դրամական օգնություն խնդրելով:³

Իրադրությունը բնութագրող է հետևյալ փաստը. 1907 թ. մարտի 15-ին գեթունցիները թուրքիկ են փակցնում գավառապետարանի դռանը՝ այդ եղանակով հայտնելով իրենց բողոքը: «Տուրք գանձելու պատրվակին տակ ժողովուրդը կը նեղեք, սանձարձակ կը գործեք, անդրադարձեք 1895-96-ի ապստամբության, որն այնքան ծանր նստավ կառավարության վրա. ձեր նախորդներու անհեռատեսությունը պետք էր զգուշացնել ձեզի, այս անգամ առաջին գոհերը դուք պիտի ըլլաք, հանգիստ թողուցեք անոթի ժողովուրդը, որ

¹ Սմբատ Բյուրատ, Արյունի ճամբուն վրա, Կ. Պոլիս, 1911, էջ 267:

² Մ. Ճիգմեճյան, նշվ. աշխ., էջ 119:

³ ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր Մ. Մաշտոցի անվան Մատենադարան. Իգմիրյան կաթողիկոսի արխիվ, ց. 46, թղթ. 115, վավ. 14:

ընտանիքին օրական հացին վրա խորհի,- գրված էր այնտեղ:⁴

20-րդ դարասկզբին հայ ազատագրական պայքարը, ցավոք, հիմնականում տեղային բնույթ էր կրում: Չնայած Ձեյթունում և Լեռնային Կիլիկիայի այլ վայրերում ելույթներ էին նախատեսվում համիդյան բռնակալության դեմ, սակայն երկրամասի հայության մեծամասնությունը անմասն էր դրանց: Ինչպես գրել է Ս. Ջավարյանը «Թույլ է ազգային գիտակցությունը Կիլիկիո հայության մեջ, ավելի ևս թույլ է հեղափոխական գիտակցությունը... Ամեն մեկը խլուրդի նման մտած է իր բույնը, չի տեսնում լույս աշխարհը, չի բացվում եղբորն իսկ»: Նշելով, որ շատ քչերն են զինված և «ան ալ գրեթե միայն չիֆթաներով ու շեշխաներով», Ջավարյանը եզրակացնում է, որ բացի Ձեյթունից, Չորք-Մարզվանի և Քեսապի հայերից, քչերն են պատրաստ պայքարի: «Գործը հաջողությամբ պսակելու (ապստամբություն կազմակերպելու - Ռ.Գ.) համար պահանջվում է դեռևս շատ ու շատ աշխատանք, գուցե նույնքան ուժեր, որքան մենք տված ենք Վասպուրականին կամ Սասուն-Մշո դաշտին»:¹ Նույն երևույթն առկա էր նաև Արևմտյան Հայաստանում: Դա բացատրվում է ոչ միայն արևմտահայության տարբեր հատվածների անջրպետվածությամբ (որն իր վարչական բաժանումներով և քաղաքականությամբ իրականացնում էր օսմանյան կառավարությունը), այլև ազգային կուսակցությունների անջատ, երբեմն՝ իրարամերձ գործունեությամբ, որը երբեք էլ նպաստավոր պայմաններ չէր ստեղծում միասնական պայքարի համար: Եվ չնայած ազգային ու քաղաքական բոլոր ուժերն էլ ըմբռնում էին համատեղ պայքարի անհրաժեշտությունը, սակայն նրանց միջև առկա հակամարտությունները խանգարում էին ընդհանուր ձևակառույցի հանդես գալուն:

1906 թ. մայիսին հնչակյան Մեծն Մուրադը (Համբարձում Բոյաջյան) հանդես եկավ հայտարարությամբ, որով հնչակյան և դաշնակցական բոլոր կազմակերպություններին կոչ էր անում «վերջ տալ ներկուսակցական շահերը համազգային շահերից վեր դասելու արատավոր գործելակերպին, հրավիրել միջկուսակցական համագումար, միավորել բոլոր ուժերը՝ միասնական ձևակառույց պայքարելու ժողովրդի ազատության մեծ գործի համար»:² Սակայն կոչը հաջողություն չի գտնում:

⁴ Ձեյթունի պատմագիրքը, Բուենոս-Այրես, 1960, էջ 644:

¹ Ս. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 463:

² Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 486-487:



1
A II
28877

1907 թ. նոյեմբերի 24-ին Մեծն Մուրադի ջանքերով արևմտահայ ազատագրական պայքարին վերաբերող հարցերում այսպես կոչված՝ համերաշխության դաշինք է կնքվում Հնչակյան և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունների միջև: Հ. Բոյաջյանի և Վերակազմյալներ Մ. Տամատյանի, Լ. Մկրտչյանի ու Վ. Թեքեյանի՝ համագործակցությունն իր պտուղներն է տալիս Կիլիկիայում:

Նույն ժամանակ ՀՅ Դաշնակցության ԿԿ-ն Վերակազմյալ հնչակյան կուսակցության վարչությանը հրավեր է ուղարկում մասնակցելու սուլթանական վարչակարգի դեմ պայքարի հարցերին նվիրված Փարիզի կոնֆերանսին, որին մասնակցում էին Օսմանյան Թուրքիայի ազգային կուսակցությունները, բայց հնչակյանները, հավատ չընծայելով երիտթուրքերին, մերժում են հրավերը:¹

Տեսնելով քաղաքական պայքարի աշխուժացումը Կիլիկիայում, հաշվի առնելով կիլիկիահայության տնտեսական հզորությունը սուլթան Համիդը ծրագրում էր իրականացնել Ադանայի վիլայեթի հայության կոտորածները: Կիլիկիահայության ընդվզումները բացառելու համար նա Ադանայում և Հալեպում հաստատեց «զինվորական արտակարգ հրամանատարություններ», որոնց խնդիրն էր Կիլիկիա գաղթեցնել մոտ 150.000 մահմեդականների ի հակակշիռ այնտեղ հայերի թվական, տնտեսական և մշակութային գերազանցությունը:²

1905-1906 թթ. Աբդուլ Համիդը նախապատրաստում էր երկրամասի հայության ջարդը, որի ծրագիրն ամենայն մանրամասնությամբ մշակվել էր Ադանայի և Հալեպի զինվորական հրամանատարությունների կողմից: Թուրք հետադեմ ամբոխի մոլեռանդությունը արթնացնելու նպատակով իշխանությունները հայերին ապստամբության միջոցով Կիլիկիան Թուրքիայից անջատելու կեղծ մեղադրանքներ էին ներկայացնում: Սակայն նահանգապետ Բահրի փաշան, խելամիտ մարդ լինելով և հասկանալով Թուրքիային հասցվելիք վնասը, ժխտում էր հայերին ուղղված զրպարտությունները և կանխում ջարդի սպառնալիք ունեցող շարժումները:³

¹ Մ. Ճիզմեճյան, նշվ. աշխ., էջ 130-133:

² Ռ. Գասպարյան, Ադանայի 1909թ. կոտորածները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, N 4, էջ 25:

³ Մուշեղ եպիսկոպոս Սերովբյան, Ատանայի ջարդը և պատասխանատուները, Կահիրե, 1909, էջ 10:

1908 թ. տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջումը մեծ հույսեր առաջացրեց թուրքիայի բնակչության, այդ թվում՝ հայերի շրջանում: Այն ընկալվեց որպես թուրքական դարավոր բռնակալության և ազգահալած քաղաքականության ավարտ: Տառապած հայ ժողովուրդը մի պահ հավատաց երիտթուրքերի հռչակած եղբայրության, ազատության ու հավասարության կարգախոսներին: Ճիշտ է նկատել Հ. Գիբբոնսը, որ «Ամբողջ կայսրության մեջ ոչ ոք այնպես սրտազին չողջունեց սահմանադրական կարգերի հաստատումը, ոչ ոք այնպես նվիրված աջակցություն ցույց չտվեց երիտթուրքերին՝ ինչպես հայերը: Նրանց միակ սխալն այն էր, որ սահմանադրական կարգերի առաջին ինն ամիսների ընթացքում անկեղծ ուրախություն և հավատ են ունեցել Սալոնիկի գործիչների նկատմամբ, որը և շատ բացահայտ էին արտահայտում»:¹ Ամենայն հայոց կաթողիկոսը մեծ տերություններին հղած նամակում գրում էր. «Իմ մարտիրոս ազգն եղավ, որ ամենից շատ և ամբողջապես նվիրվեց այս գործի հաջողությանը: Հայերը հույս ունեին, որ այս կերպ իրենց տարիներով ակնկալած ապահով գոյության պայմաններ են ստեղծված, ուստի և նրանք ամենից ավելի եռանդով սկսեցին աշխատել ընդհանուր թուրքիայի վերածնության համար»:² Սակայն այդ սահմանադրությունը, ինչպես նկատել է ֆրանսիացի հեղինակ էլենա դը լա Սուշերը «Որսիզմը 1000 պատկերներում» գրքում, ոչինչ չտվեց հայերին: «Ավելացավ մի բան. երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի անավարտ գործը լավ մշակված եղանակով»:³

Երիտթուրքերը ժողովրդին դեմոկրատական ազատությունների, ազգային հալածանքների վերացման, իրավահավասարության հաստատման բազմաթիվ խոստումներ տվեցին, որոնք մնացին թղթի վրա: Միաժամանակ, որդեգրելով և շարունակելով Աբդուլ Համիդի հայաջինջ քաղաքականությունը, հետապնդելով համախալածականության և համաթուրքական նպատակներ՝ նրանք իրենց առաջ խնդիր էին դրել օսմանականության գաղափարախոսությունն օգտագործել քրիստոնյա ժողովուրդների բռնի թուրքացման համար: Ակադեմիկոս Ե. Տառլեն իրավացիորեն նշում է, որ երիտթուր-

¹ Г. А. Гиббонс, Последние избиение в Армении, Петроград, 1916, стр. 18.

² ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 105, ք. 36:

³ Elena de la Souchere, La Racisme en Mille Images, Paris, 1967, p. 215.

քերն իշխանության գլուխ անցան այն հաստատ համոզմամբ, որ «ազգային հարցերը կլուծեն բոլոր ազգությունների ֆիզիկական ոչնչացմամբ, բացի թուրքերից և նրանցից, ովքեր կհամաձայնեն անհապաղ թուրք դառնալ»:⁴ Այդ մտայնությունն իր մարմնավորումը գտավ առաջին հերթին հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ: Ե. Տառլեի միտքն է հավաստում և է. Վերները, ըստ որի քրիստոնյաները պետք է կա՛մ թուրքացվեին, կա՛մ մահ ընդունեին:⁵

Խոսելով երիտթուրքական հեղափոխության էության մասին՝ ամերիկացի հետազոտող, փիլիսոփա Էդուարդ Միդ Ըրլը իր «Թուրքիան, մեծ տերությունները և Բաղդադի երկաթուղին» աշխատության մեջ նկատել է. «Քաղաքական առումով երիտթուրքերի ծրագիրը ոչ միայն հաշտվողական էր, այլև ազգայնական: Հեղափոխության առաջին ամիսների թարմ ոգևորության ներքո շեշտը դրվեց կայսրության քաղաքական հաստատությունների նորացման վրա, խորհրդարանական կառավարություն, նախարարական պատասխանատվություն և հավասարություն օրենքի առաջ, - սրանք էին բարեփոխումների նպատակները»: Բայց ժամանակի ընթացքում դրանք խամրեցին և «թուրքերի ազգայնական գործողությունները լրիվ ընթացքի մեջ էին»:¹

Բազմաթիվ և հավաստի վկայություններով սխալ ընկալվեց «ազատություն» կարգախոսը, որը մոլեռանդ և հետադեմ թուրք շրջաններն ընդունեցին ոչ թե որպես ժողովրդավարական ազատություններ, այլ որպես գործողությունների ազատություն: «Սա՞ է ձեր խոստացած ազատությունը», - դժգոհեց մի մահմեդական, երբ նրան մահապատժի դատապարտեցին քրիստոնյայի սպանելու համար»:² Ռուսական դեսպան Ի. Զինովևը Կ. Պոլսից հաղորդում է. «Ազատություն բառը սխալ մեկնաբանվեց. բոլոր հանցագործները ազատ արձակվեցին, թուրքերը իրենց արտոնյալ համարելով, չեն կարող հաշտվել սահմանադրության հռչակած համընդհանուր ազատության հետ»:³

Փաստորեն, երիտթուրքերը ազգային խտրականության, հայակործան քաղաքականության գործում հանդիսացան Արդուլ

⁴ Ե. В. Тарле, соч., т. 5, М., 1958, стр. 199.

⁵ Германские источники о геноциде армян, т. 1, Ереван, 1991, стр. 65.

¹ Earl Eduard M., Turkey, The Great Powers and the Bagdad railway, New York, 1966, p. 16.

² Buxton Roden C., Turkey in Revolution, London-Leipsic, 1909, p. 101.

³ АВГР, ф. Канцелярия МИА, оп. 470, г. 1900, л. 34, стр. 9.

Համիդի անմիջական ժառանգորդները, յուրացրին և կատարելագործեցին նրա գործելակերպը՝ իրականացնելով Կիլիկիայի հայության կոտորածները, որով և դրվեց ապագա եղեռնի եռանդագին նախապատրաստման և հայությանն իսպառ բնաջնջելու ծրագրի սկիզբը:

Սահմանադրության նկատմամբ հայ ժողովրդի հավատը խախտվեց Ադանայի վիլայեթում և Կիլիկիայի այլ վայրերում կազմակերպված կոտորածներով: Պատահական չէր, որ այս անգամ ջարդեր կազմակերպվեցին ոչ թե Արևմտյան Հայաստանում, այլ Կիլիկիայում: Դա ուներ իր առարկայական դրդապատճառները:

Ինչպես արդեն նշել ենք, 20-րդ դարի սկզբին Ադանայի վիլայեթը համարվում էր Թուրքիայի համեմատաբար զարգացած շրջաններից մեկը, որտեղ կապիտալիստական արտադրատեղանակն անհամեմատ ավելի արագ էր արմատավորվում, քան երկրի մնացած վայրերում: Կիլայեթի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը (մոտ 400.000), իսկ Ադանա քաղաքի 66.000 բնակիչներից հայեր էին 22.000-ը, որոնք կարևոր դեր էին կատարում նահանգի և ընդհանրապես Կիլիկիայի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Հայերն իրենց ձեռքում էին կենտրոնացրել ներքին շուկայում ծավալվող առևտուրը, արդյունաբերական փոքրիշատե խոշոր ձեռնարկությունները և գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը, ընդ որում, կիլիկիահայ բուրժուազիան կարողանում էր իր արտադրանքը վաճառքի հանել նաև արտաքին շուկա: Երկրամասի տնտեսական զարգացման զարկերակը փաստորեն գտնվում էր հայ բուրժուազիայի ձեռքին: «Ոչ մի կասկած չկա, - գրում է գերմանացի դիվանագետ Պ. Ռոհրբախը, - որ նրանք (հայերը - Ռ. Գ.) թե՛ իմացական, թե՛ նյութական տեսակետով ամենագործունյա տարրն են արևելյան բոլոր ժողովուրդների մեջ»:¹ Նույն միջոցով է արտահայտել նաև ռուս լրագրողուհի Ա. Տիրկովան, նշելով, որ Թուրքիայում առևտրական բոլոր գործերը վարում են հայերը և որ «թուրքերը խելքի են եկել և ուրախ կլինեին մրցել նրանց հետ, բայց դրա համար նրանք չունեն ոչ փորձ, ոչ փող»:² Եվ ահա այդ գործունյա տարրի տնտեսական անկախությունն ու ազդեցության ընդլայնումը չէր համապատասխանում թուրքական բուրժու-

¹ Տես Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 62:

² А. Тиркова, Страна Турция и маадотурки, Петроград, 1916, стр. 131.

լազիայի և ազգայնամոլ թուրք ջարդարարների շահերին, որոնք, չունենալով ոչ փող, ոչ փորձ, չկարողանալով մրցել նրա հետ, կազմակերպեցին և իրականացրին հայերի կոտորածները Կիլիկիայում 1909 թ.:

Կար նաև մեկ այլ հանգամանք. գարնան և ամռան ամիսներին Ադանա էին գալիս մոտ 50.000 հայ մշակներ կայսրության տարբեր շրջաններից, որով Ադանան դառնում էր ամենախիտ հայաբնակ վիլայեթը: Միով բանիվ՝ «Ատանայի մեջ կամփոփվեր ամենաստվար հայությունը իր տնտեսական ու հողագործական բարգավաճ կյանքով», ուստի այս անգամ գլխավոր հարվածը հասցվեց Ադանայի ուղղությամբ, «քանի որ Ատանային տրվելիք հարվածը Կիլիկիոյ սրտին տրված մահացու հարվածը պիտի ըլլար»:³

Երիտթուրքական հեղաշրջումից հետո նոր կառավարիչները պաշտոնանկ արին նահանգապետ Բահրի փաշային, որին փոխարինեց համիդյան ոգով դաստիարակված Ջևադ փաշան, իսկ նահանգի գործերի հրամանատար նշանակվեց լեռնական զեյթունցիներից պարտություն կրած տխրահռչակ Մուսթաֆա Ռեմզի փաշան: Սրանք էլ անմիջականորեն կազմակերպեցին կոտորածները՝ համաձայն ի վերուստ ստացած հրահանգների:

Մինչդեռ՝ հայերն իրոք ոգևորված էին համիդյան վարչակարգի տապալմամբ և պատրանքներ էին տափում վարդապույն ապագայի հանդեպ: Սահմանադրության ընդունման, ժողովրդավարական ազատությունների հռչակման, ազգային խտրականության վերացման և իրավահավասարության հաստատման բազմաթիվ խոստումների մթնոլորտում որոշ հայ գործիչներ խանդավառությամբ ողջունեցին երիտթուրքական հեղաշրջումը: Քաղաքական անհեռատեսությունը, դեպքերի և իրադարձությունների նկատմամբ ոչ սթափ մոտեցումը հասցրին նրան, որ նույնիսկ բազմավաստակ պատմաբան Լեոն 1909 թ. հունվարի 1-ին հրապարակած հոդվածում երիտթուրքական հեղափոխությունը համարում է այնպիսի երևույթ, որի նշանակությունն ամբողջովին ըմբռնել ժամանակակիցներն ի գործու չեն:¹ Գ. Թազվորյանն իր «Երազանքի ու տազնապանքի տարիներ» գրքում սահմանադրության ընդունմանը հաջորդած շրջանը բնութագրել է որպես «մեղրալուսնային ամիսներու երջանիկ օրեր», երբ «ոչ ոք կհամարձակեր կասկածի տակ առնել անոնց

³ Մուշեղ Եպիսկոպոս Սերովբյան, Ատանայի ջարդը և պատասխանատուները, էջ 11:

¹ Գործ, 1 հունվարի, 1909 թ.:

խաբեպատիր հանգամանքը, վախենալով, որ սրբապղծություն գործած կըլլա անգիտակցաբար»:²

Հայերի այդօրինակ տրամադրությունն ավելի էր գրգռում թուրք հակասահմանադրական տարրերին, որոնց ներշնչում էին, որ սահմանադրությունը հայերի արածն է, ուստի հարկավոր է վերացնել նրանց՝ սահմանադրության դեմ հաջողությամբ պայքարելու համար: «Սահմանադրությունը,- գրել է Հ. Գիբբոնսը,- որ հայերը ողջունեցին որպես իրենց քաղաքական ազատության արշալույսը, համարյա անմիջապես չարաբաստիկ կերպով դարձավ նրանց մահվան դատավճիռը»:³

Ինչպես հայկական նախորդ ջարդերը, այնպես էլ Ադանայի կոտորածները երկար ժամանակ նախապատրաստվում էին կառավարության կողմից: «Պատմականորեն հաստատված ճշմարտություն մըն է, թե թուրք ամբոխը ինքնաբերաբար չի համարձակիր որևէ շարժում ընելու և ան հրապարակ կուգա հայերու դեմ երկու պարագաներու մեջ միայն: Նախ պետք է հայ ժողովուրդը անգնն ըլլա և պաշտպանվելու միջոցներե զուրկ, հետո կառավարությունը ուղղակի պետք է թելադրե ու դրդե գայն, որ իր ծախսորդության պարագային ինքը իր բանակովը գորավիզ պիտի ըլլա իրեն»,- իրավագիտորեն նկատել է Գ. Թագվորյանը:¹

Կիլիկիահայության կոտորածների անմիջական իրագործումը դրված էր տեղական իշխանության, կոնկրետ՝ Ջևադ բեյի վրա: Նրա նահանգապետության առաջին իսկ օրերից տեղի էին ունենում այնպիսի դեպքեր, որոնք, ականատեսի վկայությամբ, տեսնված չէին բռնապետական շրջանում: Սահմանադրության հռչակումից 1,5 ամիս անց Ադանայում սկսվում է «խուլ կերպով ծայր տալ մեկ կողմեն հակասահմանադրական շարժումը և մյուս կողմեն հայերու հանդեպ ջարդի մը սպառնալիքը»:² Այդ դեպքերը, որ աստիճանաբար լայն ծավալ էին ստանում, հետապնդում էին մի նպատակ գրգռել թուրք մոլեռանդ ուժերին, խռովության նախապատրաստում և թուրքիայից անջատման ձգտում վերագրել հայերին, առաջ բերել ազգամիջայն ընդհարումներ, որոնք էլ, ի վերջո, կհանգեցնեին ջարդերի: Կ.Պոլսի ռուսական դեսպան Ի. Ջինովկը 1909 թ. փետրվարի

² Գ. Թագվորյան, Երազանքի ու տագնապանքի տարիներ, Կահիրե, 1961, էջ 12:

³ Г. Гиббонс, указ. соч., стр. 22.

¹ Գ. Թագվորյան, նշվ. աշխ., էջ 70:

² Մուշեղ եպիսկոպոս Սերովբյան, նշվ. աշխ., էջ 34:

21-ին հաղորդում է. «Անցած տարվա դեկտեմբերի առաջին կեսին Հալեպի վիլայեթի Մարաշ քաղաքում անկարգություններ եղան, որոնք քրիստոնյաների նկատմամբ մահմեդականների թշնամական վերաբերմունքի վկայությունն էին»:³ «Հայրենիք» շաբաթաթերթը դեռ հունվար ամսին անդրադառնալով Կիլիկիայում խմորվող դեպքերին՝ նշել է, որ «կուսակալության կեդրոն Ադանան... Աբդուլ Գա-տերի (ջարդերի կազմակերպիչներից - Ռ.Գ.) և իր արքայականներուն շնորհիվ այսօր ճգնաժամային տենդոտ շրջանի մը մեջ կը տարուբերվի», որ «թուրք տարրը անհպելի հուր մը, մշտադադար կրակ մը դարձած է այս ժամուս»:⁴

Եվ իրոք, 1908 թ. վերջին և 1909 թ. սկզբին հայ-թուրքական հարաբերությունները Ադանայում և Կիլիկիայի մյուս շրջաններում այնքան էին սրվել, որ թուրք առ թուրք կարելի էր սպասել ջարդերի բռնկմանը: Հարկ է նշել, որ ջարդերի սպառնալիք էր ստեղծվել նաև Արևմտյան Հայաստանում, հայաբնակ այլ շրջաններում: «Գործ» օրաթերթի հաղորդման համաձայն՝ Երզնկայում իշխանությունները թշնամական վերաբերմունք են դրսևորում դեպի հայերը, քրդերը և թուրքերը զինված շրջում են փողոցներում, ծեծում և բանտարկում հայերին: «Մի խոսքով կառավարությունը զինաթափ է անում առանց այն էլ անգեն հայերին, իսկ զինված քրդին ու թուրքին ընդհակառակը, քաջալերում է զենք գործածել»:¹ Ընդհարումներ հրահրելու նպատակով ջարդի կազմակերպիչներն Ադանայի մզկիթներից մեկի դռանն աղտ են քսում և հայտարարում, որ հայերը պղծել են այն: Այդ մասին Կիլիկիայի հայոց կաթողիկոս Սահակ Խապայանը ցավով նկատել է. «...այս ջանավար ազգը արյուն խմելու գազանության հագուրդ տալու համար իր սրբությունները իր ձեռքով կը պղծե, ըսելու համար, որ «հայը ըրավ»։ դարերով այս մեթոդին հետևած են, հայը իր արյունին մեջ խեղդելու անիծապարտ տարին ալ նույն մեթոդը ի գործ դրին և տակավին պիտի դնեն»:²

Ջարդարարները քաղաքում շփոթություն և հուզում առաջացնելու, կրքերը բորբոքելու նպատակով կեղծ լուրեր են տարածում, իբր Հաճընի հայերը ապստամբություն են բարձրացրել, գրավել են զինանոցը և հարձակվելու են Ադանայի վրա, որտեղ միանա-

³ АВГР, ф. Канцелярия МИД, оп 470, г. 1909, д. 34, стр. 217.

⁴ Հայրենիք, Բոստոն, N 1, 1909, էջ 3:

¹ Գործ, Թիֆլիս, 3 ապրիլի (N 68) 1909 թ.:

² Կիլիկիյան կսկիծներ, Վավերագրեր Կիլիկիո կաթողիկոսական դիվանի, Բեյրութ, 1927, էջ 74:

լով տեղի հայ ազգաբնակչությանը՝ ջարդելու են թուրքերին: Սպանելով մի թլպաւոված հայ երիտասարդի՝ ջարդը նախապատրաստողները նրան ներկայացնում են որպէս հայերի ձեռքով սպանված մահմեդականի, տարածելով նաև, որ քաղաքի այգիներում հայերը տանջամահ են արել մի թրքուհու, կոտորել 5 անձից բաղկացած ընտանիք:³ Այս և նմանօրինակ շատ դեպքեր ոչ թե Ադանայի կոտորածների պատճառներն էին, այլ սոսկ առիթը դեպի հայերն ունեցած ատելության բռնկման՝ նախօրոք ծրագրված ջարդի կազմակերպիչների կողմից:

Ադանայի առաջին ջարդը սկսվեց 1909 թ. ապրիլի 1-ին, չորեքշաբթի կեսօրին, բայց դեռ առավոտյան ավերվել և կողոպտվել էր Թոսպաղը Գալեսի թաղը: Իմանալով հայերի անհանգստության և վախի մասին, նահանգապետ Ջևադ բեյն իր մոտ է հրավիրում քաղաքի հայության հոգևոր և աշխարհիկ հեղինակությունների, հորդորում նրանց իրենց ազգակիցներին համոզելու, որ բացեն խանութները, որից հետո խուժանը կցրվի: Բայց թուրքերը, որոնք վաղ առավոտից հավաքվել էին շուկայում գլուխները կապած ձերմակ փաթեթներով, որպեսզի ընդհարման ժամանակ հնարավոր լինի ձանաչել միմյանց, մոլլաների առաջնորդությամբ հեղեղում են ողջ շուկան, հարձակվում այնտեղ գտնվող հայերի վրա և սկսում կոտորածը: Թուրքերին են միանում քրդերն ու չերքեզները, որոնք ջարդերի առաջին օրը «շուկաները թալանելով և կեղորոնեն դուրս թուրք թաղերուն մեջ բնակող կամ պանդոկներուն մեջ մնացող քրիստոնյաները ջարդելով անցուցին»:¹ Շուկայում հայերի հետ հաշվեհարդար տեսնելուց և խանութները կողոպտելուց հետո մոլեռանդ ամբոխի կողմից հարձակման են ենթարկվում Հաճընից, Մուշից, Խարբերդից, Սեբաստիայից եկած հայ մշակներով լի պանդոկները և չնայած որոշ վայրերում հայերը, հատկապես՝ հաճընցիները դիմում են հուսահատ ու համառ դիմադրության, այնուամենայնիվ, կոտորածների հենց առաջին օրը միայն պանդոկներում «կատարյալ վայրագությամբ» զոհ են գնում 300 հոգի: Գիշերը ջարդարարները կատաղի գրոհ են ձեռնարկում հայկական թաղամասերի վրա: Հայերը թաքնվում են տներում՝ ցանկանալով գեթ որոշ ժամանակ հետաձգել անխուսափելին, բայց իզուր. «Հրազեններու անթիվ պայթյուններն երկինքը կը գոռար և երկիրը կը սարսռեր, խառնակությունը

³ 3. Թերգյան, Կիլիկիո աղետը, Կ. Պոլիս, 1912, էջ 27:

¹ 3. Թերգյան, Կիլիկիո աղետը, Կ. Պոլիս, 1912, էջ 27:

ծայր աստիճանին հասած էր», «հրացանաձգությունները կը որոտային... մինչ օգնության աղաղակները ավելի կը հուզեին և կը սարսռեցնէին զնեզ», - գրում է Հ. Թերզյանն այդ դժնդակ օրերի մասին:² Սկսվում է հայկական թաղամասերի հրդեհումը: Դեպքերի ականատեսի վկայությամբ «Գիշերվան մութը կը մոտենար բերելով իր հետ լուրջության սոսկումներ. զենքի ձայները կը դադրեր. դիակները շուկաներուն ու փողոցներուն մեջ փռված կը մնային: Ավերիչ բոցերու լույսերով տեղ-տեղ թաղերը լուսավորված, դաշտերը կերևային, հրդեհը հառաջ կը խաղար ահռելի ճարձատումներով. սև մոխիրը կարծես դժոխքի խորերեն կելլեր. Ատանա հրաբուխ Վեսուվներով շրջապատված կերևար»:³

Ապրիլի 2-ին, չկարողանալով դիմադրել բազմահազար ջարդարարներին, հայերն ապաստանում են քաղաքի կենտրոնում գտնվող եկեղեցիներում ու դպրոցներում: Առաջին իսկ օրը ճիզվիտների կոլեջն ապաստան տվեց 2000 փախստականների, որոնց թիվը հաջորդ օրը հասավ մոտ 6000-ի:⁴ Նույնքան հայեր էին ապաստանել և ամերիկյան կոլեջում:⁵ Այդ օրերի սպանող և ահավոր դեպքերն իրենց արտացոլումն են գտել նաև ֆրանսիացի լրագրող, ազգությամբ հույն Ադոսսիդեսի «Հայերն ու երիտթուրքերը» գրքում, որտեղ հանգամանորեն շարադրված է կոտորածների ողջ ընթացքն իր քստմանի մանրամասներով: «Որոշ տեղերում, - գրում է նա, - հայերին սպանում են խմբերով, 100-200 մարդ միասին մի փոքրիկ տարածության վրա և ամեն անգամ սպանությունից հետո վրա է հասնում թալանի հերթը»:⁶ Երեկոյան զինված խաժամուժը հարձակվում է եկեղեցիների վրա, որտեղ պատսպարվել էին հայերը: Հրդեհվում են դպրոցները, եկեղեցիները, շրջապատվում է ամերիկյան իգական վարժարանը, որտեղ ապաստանած հայ մանուկները փրկվում են ամերիկացի միսիոներ Չեմբերսիի շնորհիվ:⁷ Հազարավոր հայերի ստույգ մահից փրկվում է հույն հայտնի գործարար Թրիփանին՝ պատսպարելով նրանց իր գործարանում: Այդ «վեհոգի հույ-

² Նույն տեղում, էջ 34-35:

³ Նույն տեղում, էջ 41:

⁴ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 337, ք. 28:

⁵ F. Duckette, Turkish atrocities. The Young Turks and the truth about Holocaust at Adana in Asia Minor, During April, 1909, n. p., 1913, p. 51.

⁶ Геноцид армян в Османской Империи. Сборник материалов и документов (Под редакцией М. Г. Персиссина), Ереван, 1982, стр. 208.

⁷ Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 46:

նը... գնդակի, արյունի և կրակի ահավոր օրերուն իր գործարանին դուռները լայնորեն բանալով տասներկու հազար հայերու առաջ ստույգ մահերեն փրկելով անոնց կյանքները, մանավանդ օրերով շոգիի վրա պահելով իր մեքենաները հարծակունի ատեն մարդասպանների ոհմակը ցիրուցան ընելու և անոնց հրծիգությունը կասեցնելու համար տաք ջուրի հեղեղներով...»:⁵ 300 հայերի անխուսափելի կործանումից փրկում է ռուսական հյուպատոսության թարգմանիչ Յանգո Արտյոմիի մայրը, որը երեք օր պահում և սնում է անտուն, ամեն ինչից զրկված և անհայտ գալիքի սարսափով պառկած հայերին:⁶

Ականատեսների վկայությամբ քաղաքն այնպիսի մարդկանց ծեռքում էր, որոնց մեջ մարդկային ոչինչ այլևս չէր մնացել: «Նրանք վազում են, խոցում, սպանում, մաս-մաս մորթում և հեռանում պատված արյամբ ու քրտինքով, ոռնալով ինչպես վայրի գազաններ: Նրանք ներխուժում են փախստականներով լի տները, եկեղեցիները և դպրոցները: Չոհերը հարյուրներով նետվում են նեղիկ ու ծուռումուռ փողոցները, ելք են փնտրում, և հանկարծ նրանց կանգնեցնում է հրդեհը, դիակների և վիրավորների մարմինների կույտը մարդկային մարմիններից կազմված մի իսկական բարիկադ կամ էլ մարդասպանների մի ուրիշ խումբ»,- հիշում է Ադոսսիդեսը:¹

Իր աշխատության էջերում Ֆերման Դաքեթը, նկարագրելով թուրքերի վայրագությունները, նշում է, որ նրանք բացում էին հայերի «կրծքավանդակը, հանում թոքերը և նետում զոհերի մայրերի, կանանց ու աղջիկների առաջ: Հարյուրավոր դեպքերում նրանք կտրում էին կանանց ստինքները և տղամարդկանց արական օրգանը կամ մասնատում էին տարաբախտ զոհերի մարմիններն ու նետում հարազատներին ի տես»:² Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հաղորդման համաձայն, Ադանայի եկեղեցիներից մեկում սպանել էին ավելի քան 100 10-15 տարեկան երեխաների, որոնց բոլորին մինչ այդ բռնաբարել էին:³

Ապրիլի 3-ին կոտորածն ավելի է սաստկանում: Կողոպտիչների և մարդասպանների նորանոր խմբեր Հալեպից ու Սեբաստիայից դիմում էին դեպի Ադանա՝ համալրելով գազանաբարո խուժանի:

⁵ Ա. Թեոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, Կ. Պոլիս, 1910, էջ 57:

⁶ С. Запринев, Аджикские черные дни, Баку, 1909, стр. 19-20.

¹ Геноцид армян ..., стр. 208.

² F. Duckette, op. cit., p. 36.

³ Նույն տեղում, էջ 37:

շարքերը: Նույն օրը հայերը Օսման բեյի միջոցով կուսակալ Ջևադ բեյին են հաղորդում իրենց լալահառաչ խնդրանքները դադարեցնել անգթությամբ և դաժանությամբ մինչ այդ չեղած կոտորածները, որից հետո «կառավարության կողմեն խուճմը պաշտոնյաներ և զինվորներ եկան» և հանդարտեցրին թուրքերին:³ «Ձինվորները, որ շարդեն առաջ իբր թե փոքրաթիվ խուճանը չէին կրցած զսպել, ջարդեն ետքը անոր տասնապատիկը եղող խուճանը զսպեցին կես ժամվա մեջ»,- նկատել է Հ. Թերզյանը և եզրակացրել, որ ամեն ինչ տեղի էր ունենում իշխանությունների գիտությամբ ու ղեկավարությամբ:⁴ Եվ իրոք, կոտորածների այդօրինակ մեկ հրամանով դադարեցումը ապացույցն էր այն բանի, որ դրանք «պատրաստված և լիազմակերպված էին տեղական իշխանությանց գիտակցությամբ և հրամանով»:⁵

Հայերը չէին հավատում անսպասելի փրկությանը և միայն երկու օր անց սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու կողոպտված բնակարանները: Երկյուղ կրելով նոր ջարդերի սպառնալիքից՝ Ադանայի հայության մի մասը բռնեց գաղթի ճամփան փրկություն որոնելով Եգիպտոսում, Կիպրոսում, Մերսինում և այլուր (միայն Ադանա և Տարսոն քաղաքներից Կիպրոս գաղթածների թիվն անցնում էր 2000-ից), սակայն նահանգային իշխանությունը շուտով արգելեց գաղթը, «կարծես նկատելով, որ երկրորդ ջարդին ենթարկվելիք մարդ մը չը պիտի մնա»:¹

Կոտորածների անսպասելի դադարեցումը կասկած հարուցեց հայերի մոտ: Այդ կասկածն օրավուր աճում էր երկու ջարդերի միջև ընկած ինն օրվա ընթացքում: «Հանդարտության բուն պատճառը չէինք գիտեր,- գրում է դեպքերի ականատեսը,- պատճառն արդյոք կուսակալին դրկած խնդրագի՞րն էր, եթե ոչ իսլամներուն ջարդե, կողոպուտե, հրդեհելե հոգնիլը, և կամ ավելի սաստիկ հարձակման համար ժամանակ չահիլ ուզելը: Սակայն ինը օր ետքը կրկնվող երկրորդ ջարդը մեզ բոլորս ալ համոզեց, թե հանդարտութ-

³ Հ. Աշխյան, Ատանայի եղեռնը և Գոնիայե հուշեր, Նյու Յորք, 1956, էջ 13:

⁴ Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 55:

⁵ Հ. Պապիկյան, Տեղեկագիր Հակոբ Պապիկյանի օսմանյան երեսփոխան եղիլների, Կ. Պոլիս, 1919, էջ 27:

¹ Հ. Աշխյան, նշվ. աշխ., էջ 23: Տե՛ս նաև Ա. Պարբեյան, Կիլիկյան արհավիրքը, Կ. Պոլիս,

1909, էջ 27:

յան բուն պատճառը վերոհիշյալ երեքեն երրորդն էր»:² Արդեն ապրիլի 9-ին իթթիհատի անդամ Իսմայիլ Սեֆան «Իթիտալ» («Չափավորություն») թերթում հանդես եկավ նոր ջարդեր սկսելու կոչով. «Այն, ինչ կատարվել է, դեռ ամենը չէ, դա բավարար չէ, մենք միայն ընդմիջում տվեցինք, բայց մենք դեռ կտեսնենք, թե ինչով կավարտվի այս ամենը»,³ իսկ այդ ընթացքում ջարդարարները գաղտնի պատրաստություններ էին տեսնում՝ «սպասելով Սելանիկի ազատական զինվորներուն»:⁴

Ապրիլի 12-ին Ռումելիայից Ադանա են գալիս երիտթուրքական «ազատարար» բանակի երկու գունդ և կանգ առնում Կիշլա Մեյդանի կոչվող վայրում: Դեռևս Մերսինում, գնացք նստելուց առաջ, նրանք սպառնացել էին. «Եթե մեր ժամանման պահին որևէ սպանված մահմեդական գտնենք, զիտենք թե ինչ կանենք»:⁵ Երեկոյան ժամը 10-ին թուրքերն օգնության աղաղակներով դիմում են զորքին պաշտպանություն խնդրելով հայերի «հարձակումներից» և զինվորները, որոնք Սալոնիկի կենտրոնից ստացել էին «պակասը լրացնելու» գաղտնի հրահանգը՝ անցնում են հարձակման: Ըստ Կ. Պոլսում ռուսական դեսպան Ի. Ջինովկի հաղորդման՝ «զինվորներն անցան տեղի մահմեդական բնակչության առաջնորդների կողմը և, առանց տարիքի ու սեռի խտրության, սկսեցին կոտորել քրիստոնյաներին: Իրդեհելով նրանց տները»:¹ Բազմաթիվ աղբյուրներ հաստատում են, որ «այս անգամ նրանք հրամաններ էին ստանում իթթիհատի առաջնորդների կողմից»:²

Նշենք, որ ջարդերին մագաչափ անգամ չխանգարեց այն հանգամանքը, որ Մերսին էին ժամանել անգլիական, ռուսական, ֆրանսիական և իտալական յոթ ռազմանավեր, որոնք դեսանտ էին իջեցրել և գրավել սահմանամերձ շրջանը: Այդ առթիվ Արշակունիի Թեոդիկը խորը կսկիծով, միաժամանակ՝ անսքող ցավով և հեզմանքով գրել է. «Քաղաքակիրթ աշխարհներեն ուղարկված երկաթե այդ հզոր ոչնչությունները հետերնին բերած էին մարդեր, որոնք պաշտոնն ունեին օրն ի բուն դիտակներ աչքերուն՝ ծովափի հայ թշվառությունը դիտելու անկարեկիր, կամ ծովախորշին մեջ ծփծփուն

² Նույն տեղում, էջ 20:

³ Генерал армян... стр. 210.

⁴ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 227. ց. 1. գ. 387. ք. 36:

⁵ F. Duckette, op. cit., p. 32.

¹ АВПР, ф. Канцелярия МВЛ, оп. 470, т. 1900, л. 35, л. 19.

² F. Duckette, op. cit., p. 32.

հեք հայ դիակները լուսանկարելու»:³ Ավելին Ս. Պարթևյանը հիմքեր ուներ գրելու, որ «Եվրոպան անտարբեր ու ծանծրացած ականջով մը լսեց հայկական կոտորածներու այս նոր գույժը»:⁴

Ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը զինվորների և բաշիբոզուկների խառնամբոխը հարձակվեց Մուշեղյան վարժարանի վրա, որտեղ ապաստանածները փորձեցին փրկվել կրակե բոցերից և դուրս եկան հրկիզվող շենքից, բայց գնդակահարվեցին, իսկ շատերն այրվեցին բոցերի մեջ: Որոշ տեղեկությունների համաձայն, այդտեղ ապաստանած ավելի քան 2000 հայերը մեկ գիշերում զոհ գնացին թշնամու արյունոտ խրախճանքին: Հրդեհվեց նաև Աբգարյան վարժարանը: Այս անգամ հայկական թաղամասերը հրկիզում էին նոր ժամանած զինվորները, որոնք «վրեժի միայն այդ միջոցն էին գտել, որովհետև թուրք և քուրդ խուժանը մինչ այդ ամեն ինչ թալանել էր»:⁵ Հրդեհողների առաջին շարքերում էր նաև Ադանայի ճարտարապետ Հուսեին Էֆենդին: Ո՞վ գիտե, գուցե հայկական շինություններն իրենց ճարտարապետական յուրօրինակ լուծումներով առաջացրել էին թուրք «ճարտարապետի» գայրո՞ւյթը: Կրակի մատնվեցին չորս եկեղեցի, նրանց հարող դպրոցները, քաղաքի ամենախիտ բնակեցված թաղամասերի հարյուրավոր տներ: Հրդեհը տևեց մինչև հաջորդ երեքշաբթի՝ «հազարավոր մարդկանց թողնելով անհանգրվան և ամենավատթար թշվառության մեջ»:¹

Կոտորածների ծավալով, սպանդի դաժանությամբ, կողոպուտի սաստկությամբ, ինչպես Ադանա քաղաքի, այնպես էլ Կիլիկիայի այլ վայրերի հայության ջարդերի երկրորդ փուլն առավել ահավոր էր: Ռուսական դեսպան Ջինովկի և Բեյրութում ռուսական հյուպատոս Գագարինի՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանն ուղղված հաղորդագրության համաձայն, դեռ «ոչ շատ վաղուց ծաղկող Ադանա քաղաքի երեք չորրորդն ավերված է»:² Միայն Ադանա քաղաքում ջարդերին զոհ գնաց 18.627 հայ:³

Արդեն կոտորածներից հետո գալով Ադանա և տեսնելով թուրքերի գործադրած վայրագությունները Կիլիկիայի հայոց կաթողիկոս Սահակի ոգին ընդվզում է անարդարության և մարդկային

³ Ա. Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 13:

⁴ Ս. Պարթևյան, նշվ. աշխ., էջ 180:

⁵ Գործ. Թիֆլիս. 28-ը ապրիլի (N 86). 1909:

¹ J. Bresol. Le Turcs ont passe la ..., Paris. 1911, p. 101-102.

² АВВР, ф. Канцелярия МИА, оп. 470, т. 1909, л. 738, т. 1, л. 274.

³ Յ. Ս. Պողոսյան, Ձեյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 367:

խղճի դեմ. «Եթե իմ Աստվածս այս անօրեններուն, այս զազաններուն Աստվածն է, ես Աստծո չեմ հավատար, ես Աստծո չեմ հավատար»:⁴

Բուն քաղաքում կոտորածները հիմնականում ավարտվեցին ապրիլի 17-ին, սակայն իրադրությունը լարված էր նաև հետագա օրերին: Ռուսական հյուպատոս Մավրոմատին հաղորդում էր, որ «շարունակվում է պաշարողական դրությունը քրիստոնյաների նկատմամբ, իսկ տեղական կառավարությունն աշխատում է տեղի ունեցած կոտորածների ողջ մեղքը բարդել նրանց վրա»:⁵

Ադանայի կոտորածներին զուգընթաց ջարդեր տեղի ունեցան նաև Կիլիկիայի հայկական գյուղերում և հայաբնակ այլ վայրերում: Ապրիլի 1-ին հուզումներ սկսվեցին Տարսուսում (Տարսոնում): Անգլիական դեսպանի գեկուցագրից պարզվում է, որ այստեղ ջարդերը լայն թափ ստացան, երբ խաժամուժին միացան 400 զինվորներ: Եվս մեկ փաստ հաստատելու համար այն իրողությունը, որ երբ Ադանայի վիլայեթի տարբեր գավառների կառավարիչները նահանգային իշխանություններից գործ էին պահանջում, ապա դա հետապնդում էր ոչ թե «անկարգությունները» վերացնելու և կարգ ու կանոն հաստատելու, այլ թուրք խուժանին ավելի ուժեղացնելու նպատակը: Իսկ մինչ կանոնավոր զորամասերի ժամանումը, Ադանայի երիտթուրքական կազմակերպության ղեկավար Շյուքրին բացել էր զինապահեստը և ողջ զենքը բաժանել թուրք ամբոխին:¹

Հելեն Դեյվենփորթ Գիբբոնսը, որը կոտորածների օրերին ամուսնու հետ գտնվում էր Տարսոնում, հիշում է, որ Ադանայից «բաշիբոզուկների մի մեծ ամբոխ» էր եկել Տարսուս, որն էլ անմիջապես հարձակվեց հայկական թաղամասերի վրա:² 4.000-5.000 անօթևան հայեր ապաստանեցին տեղի ամերիկյան վարժարանում: Հրո ճարակ դարձավ ավելի քան 600 տուն: Միայն քաղաքում սրի քաշվեց 96 հայ, իսկ ողջ շրջանում 560, որից 160-ը ամբողջովին ավերված Գոզ-Օլուզ գյուղում:³ Այստեղ թուրքերը դյուրահավատ հայերին համոզում են հանձնել զենքերը, ապա սկսում են կոտորածը: Ականատեսը հիշում է. «բոցը կբարձրանար կատաղի սաստկությամբ և

⁴ Ս. Պարթևյան, նշվ. աշխ., էջ 169:

⁵ АБПР, ф. Канцелярия МИА, оп. 470, г. 1909, л. 35, л. 80.

¹ F. Duckette, op. cit., p. 50-51.

² H. D. Gibbons, The Red Rugs of Tarsus. A woman's story of the Armenian Massacres. Paris, 1919, p. 87.

³ F. Duckette, op. cit., p. 51. Տես նաև Դ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 165:

կերկարեր դեպի երկինք, անոր մեջեն կլսվեին մանկան սուր ճիչ, մայրական աղեխարշ զոչեր և օրհասական սրտաճմիկ հառաչներ... յուրաքանչյուր զոհի ճիչերուն թուրք խուժանը կպատասխաներ ծիծաղներով և լուտանքներով»:⁴

Հարկ է նշել, որ Տարսնում և շրջանում տեղի հայերի պաշտպանությամբ հանդես եկան և իրենց տներում ու հիմնարկությամբ լինելով նրանց ապաստան տվեցին հայկական քոլեջի տնօրեն, ամերիկացի միսիոներ Քրիսթին, հոլանդական հյուպատոսությունը, ինչպես նաև Բուրսուքի էսսադ և Արբեղին Չպղե Շյուքրի անունով թուրքերը, որոնցից առաջինը պատսպարեց 30, իսկ երկրորդը 200 հայերի:⁵

Տարսնից ջարդերը տարածվում են Ապտողլու, որը թուրք ավարառուների կողմից շրջապատվում է ապրիլի 3-ին: Հայերը որոշում են դիմել ինքնապաշտպանության, սակայն գյուղապետ Կարապետը դավաճանաբար ետ է պահում համագյուղացիներին կոչելով հնազանդության: Չանսալով երիտասարդության բողոքներին գյուղապետը սպիտակ դրոշ է բարձրացնում հույսը դնելով թուրքերի ուղորմածության վրա: Արդյունքում՝ վերջիններս «ողորմաճաբար» հաշվեհարդար են տեսնում հայերի հետ. կրակի են մատնվում գյուղի բոլոր 130 տները, ամենայն դաժանությամբ մորթվում են 600 հոգի:¹ Ահավոր բարբարոսություններ տեղի ունեցան հատկապես Միսիսում (Մամեստիա), որտեղ թուրքերը ծնողների աչքերի առաջ այրեցին տասնյակ մանուկների, սպանեցին տղամարդկանց և պատվազրկեցին կանանց:² Թվով 200 հայեր դիմում են տարերային ինքնապաշտպանության, բայց կոտորելով նրանց դիմադրությունը, թուրքերը վայրագորեն սրի են քաշում բնակչությանը: Կենդանի են մնում միայն 80 կին և տղամարդ ներառյալ և ծծկեր երեխաները:³ Չեստին են հավասարվում Ինջիրլիկի հայկական տները, 700 հայերից կենդանի են մնում 60-ը:⁴

Ապրիլի 1-ին կոտորածներ են տեղի ունենում նաև Օսմահիեում: Փլվում է հրկիզված եկեղեցին 500 հայերի թողնելով վիա-

⁴ Տե՛ս Զ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 176:

⁵ F. Duckette, op. cit., p. 52.

¹ Չ. Եսայան, Ավերակներուն մեջ, Կ. Պոլիս, 1911, էջ 98: Տե՛ս նաև Զ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 183:

² F. Duckette, op. cit., p. 45.

³ Դեմոստրաթիոն..., էջ 217.

⁴ Նույն տեղում, էջ 214:

տակների ու բոցերի մեջ: Գազանաբար հոշոտվում են 1500 հոգի: Գըրըզ խանում կոտորվում է 50 հայ ընտանիք, իսկ Պայասում ազատվում են «500 բանտարկյալներ, որոնք չհապաղեցին մասնակցել վայրագություններին»: Սպանություններ ու ավարառություններ են կատարվում Մերսինում, որտեղ ռուսական «Ուրալեց» ռազմանավի հրամանատար Կուզնեցովն իր նավն է ընդունում ջարդերից մազապուրծ երեք տղամարդու, 60 կանանց ու երեխաների, փրկում նրանց ստույգ մահից, տեղափոխում Ալեքսանդրեթ և ապահովում սննդով:⁵

Ավերածությունների, ջարդերի ու թալանի ենթարկվեցին Հասան Բեյլին, Լափաշլուն, Լաթաքիան, Այասը, Այնթափը, Քեսապը շրջակա 11 գյուղերով, Սողունձը, Գանլը Տերեն, Սարը Զինարը, համարյա ողջ Հալեպի վիլայեթը: Վիլայեթի վարչական կենտրոն Հալեպում ապրիլի սկզբին ազատվեցին 400 բանտարկյալներ, որոնք, Գըրըզ խանը ավերելուց հետո, ապրիլի 6-ին ներխուժեցին Անտիոք, որտեղ նույնպես «կատարվել են սպանություններ և թալանումներ»:⁶ Ականատեսը հիշում է. «Անտիոքում որք և այրիները ցիր ու ցան եղած շարունակ կը թափառեին, և այս դեպքը մեր Սուեթիո - Ճեպել Մուսայի (Մուսա լեռան - Գ.Ո.) հայ գյուղացիների վրա ալ ազդեց, որովհետև գյուղերում կային անհատներ, որոնք քաղաքին շուրջը գտնվող ագարակներում մեջ շերամաբուծությամբ կը զբաղեին, բոլորովին զոհ գնացին»:¹

Հասան Բեյլի գյուղի վրա թուրք հրոսակները հարձակվում են ապրիլի 2-ին: Հայերը, դիմելով ինքնապաշտպանության, երկու օր շարունակ հետ են մղում թուրքերի գրոհները, սակայն թշնամին գերակշիռ ուժերով կարողանում է գրավել գյուղը: Հայերը փրկություն են որոնում հայրենի լեռներում, բայց կրկնակոխ հետապնդող թշնամին մոտ 12 օր նորանոր հարվածներ է հասցնում Հասան Բեյլիի սարերում սփռված հայության բեկորներին պատճառելով ևս 300 կորուստ:²

Հրո ճարակ է դառնում ողջ Լաթաքիան անօթևան թողնելով 3000 հայերի: Ծանր իրավիճակ էր ստեղծվել և Քեսապում, որտեղ թուրք բաշխողուկները հրդեհել ու ավերել էին 500 տուն 2000 հա-

⁵ АВТР, ф. Канцелярия МИА, оп. 470, г. 1900, л. 35, л. 19, 24.

⁶ Գործ. Թիֆլիս. 11-ը ապրիլի (N 73). 1909:

¹ ՀՀ ԿՊՊԱ. ֆ. 57. ց. 2, գ. 1823, ք. 5:

² F. Duckette, op. cit., p. 63.

յերի գերեզմանելով փլատակների մեջ:³

Ապրիլի 1-ին հարձակման ենթարկվեցին Համիդիեի հայերը: Խուճապի չմատնվելով նրանք մարաշցի Հովհաննեսի և Սարգիս Աղազարյանի գլխավորությամբ դիմում են ինքնապաշտպանության թուրքերին հետ շարտելով իրենց թաղամասի մատույցներից: Նման «հանդգնությունը» բորբոքում է մահմեդականների մոլեգնությունը, որոնք կանոնավոր գործամասերի օգնությամբ ոտքի տակ են տալիս սակավաթիվ հայ պաշտպաններին և վրեժ լուծում անպաշտպան կանանցից ու երեխաներից: 1300 հայերից կենդանի են մնում ընդամենը 90 կին: Քարուքանդ են արվում վեց դպրոցներ և երկու եկեղեցի: Ֆրանսիական հյուպատոսը հիշում է, որ Համիդիեն ավերումից 15 օր անց դեռ «ճակատամարտի դաշտ էր հիշեցնում»:⁴

³ J. Bresol, op. cit., p. 113. Տե՛ս նաև Ս. Պարթևյան, նշվ. աշխ., էջ 32:

⁴ Геноцид армян ..., стр. 119.

Կիլիկիահայության կոտորածների պատմության ուսումնասիրության մեջ առանձնահատուկ տեղ և դեր պետք է հատկացնել հայերի հերոսական դիմադրությանը, որը տեղ-տեղ պսակվում էր լիակատար հաղթանակով: Դիմադրություն կազմակերպվեց ինչպես Ադանայում, այնպես էլ Կիլիկիայի այլ վայրերում: «Երբ հասկացանք, - հիշում է Հ. Թերզյանը, - որ լաց, ողբ, աղաչանք, պաղատանք և անձնատուր ըլլալ օգուտ չունի և տեսնելով, որ կառավարությունն ալ զինվորներով ու ոստիկաններով խուժանին միացած է, ստիպվեցանք ձգնաժամային բուռն դիմադրության մը դիմել, որ եթե քիչ մ'ալ ուշացնեինք՝ անկասկած ամբողջությամբ ոչնչացած պիտի ըլլայինք»:¹

Հայերն Ադանայի երեք թաղերում հաջողությամբ ինքնապաշտպանություն են կազմակերպում՝ որոշ տեղերում դիմադրելով մինչև երկու օր: Ապրիլի 1-ին Կարապետ Լաչինյանի, Տիգրան Պզտիկյանի և Միսակ Թուրսարգսյանի առաջնորդությամբ 173 կտրիճներ «դիրքեր գրավեցին և շեշտակի կրակոցներով սկսեցին զետիմ փռել ու փախուստի մատնել խուժանին, պաշարումից ազատելով բազմաթիվ համաքաղաքացիների»:² Համալրում ստանալով՝ թուրքերը վերստին հարձակվում են, սա ջորդիներն արիաբար հետ են մղում բոլոր գրոհները՝ «ազատելու համար իրենց հայ եղբայրների կյանքները, պաշտպանելու իրենց քույրերուն պատիվը, մաքուր պահելու ազգային արժանապատվության դրոշակը և զոհելով իրենց նորաբողբոջ կյանքերը»: Առանձնապես համառ դիմադրության են հանդիպում իգական վարժարանի վրա հարձակվող թուրքերը: Հայկական թաղամասից կտրված այս դպրոցում ուսանող հայ օրիորդների կյանքի և պատվի պաշտպանությունն ստանձնում են 15 անձնվեր երիտասարդներ, որոնք, մահվանն ընդառաջ նետվելով, «հարյուրավոր զինյալ թշնամիներուն դեմ սկսան ճակատ առ ճակատ կռիվ մղել»³, հետ շարտելով թուրք բարբարոսներին: Ինքնապաշտպանության էին դիմում նաև հայկական թաղամասերից կտրված առանձին տներ: Տեղ-տեղ մի քանի հոգու հաջողվում էր

¹ Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 36:

² Ա. Ս. Գամբարյան, Կիլիկիայի 1909 թ. կոտորածները, Պատմա-բանասիրական հանդես, 1988, N 4, էջ 15:

³ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 387, ք. 29-32:

հաղթել մի ամբողջ ավագակախմբի, ոմանք նույնիսկ համարձակ հակագրոհների էին դիմում՝ զգալի կորուստներ պատճառելով թշնամուն: Ընդ որում, ինչպես նշում է «Գործ» օրաթերթը, «զինված էին միայն մոտ 100-ի չափ հայեր»:⁴

Ադանայի առաջին ջարդից հետո թուրքական իշխանությունները, որպես խաղաղության գրավական, հայերից պահանջում են հանձնել զենքը, հավաքում են այն և ապա ձեռնամուխ լինում երկրորդ ջարդին:

Կիլիկիայի մի շարք շրջաններում ևս հայերը կարողացան դիմադրություն կազմակերպել: Թուրք հրոսակներն առանձնապես բուռն դիմադրության են հանդիպում Դյորթ-Յոլի (Չորթ-Մարզվան) հայերի կողմից: Իմանալով կոտորածների մասին և տեղեկանալով, որ թուրքերը պատրաստվում են հարձակվել իրենց վրա՝ նրանք տենդորեն սկսում են նախապատրաստվել ինքնապաշտպանության: Անմիջապես իրենց մոտ տեղափոխելով Օջախլի և Էոզեյլի գյուղերի հայերին՝ դյորթ-յուլցիները նույն օրն իսկ ձեռնամուխ են լինում պաշտպանական ամրությունների կառուցմանը: Ընդամենը մեկ օրվա ընթացքում քարերից ու ծառերից պատնեշներ բարձրացվեցին գյուղի շուրջը, պատրաստվեցին 150 պաշտպանական կետեր, և ուժերը բաշխվեցին դրանց վրա: Պատրաստվել էր արհեստանոց, որտեղ օր ու գիշեր աշխատում էին 100 հոգի և հայ մարտիկներին ապահովում մարտական անհրաժեշտ հումքով: «Մինչ գիշերվան ժամը մեկը՝ քիչ թե շատ ամեն բան կարգադրված է. Տարտկոցներու ետին՝ պահակները ծունր կրկնած կ'սպասեն սրտաթունդ, ակնդետ ծկտալով քարերու ծակուտիքեն»:¹

Հաջորդ օրը երիտասարդ խիզախների մի խումբ Միհրան Մելքոնյանի գլխավորությամբ կայծակընթաց օգնության է նետվում Նաջարլիից Դյորթ-Յոլ գաղթող, թշնամուց հալածված հայրենակիցներին և անվնաս տեղ հասցնում, որով գյուղում ապաստանած հայերի թիվը հասնում է 20.000-ի:² Սակայն, ինչպես նշված է Թուրքիայի ներքին գործերի նախարարությանն ուղղված մի հաղորդագրությունում, զինված էին ընդամենը 400 հայեր:³

Ապրիլի 2-ին թուրքական ուժերը 20-30.000 ռեզիֆներով

⁴ Գործ, 28 ապրիլի (N 86), 1909:

¹ Ա. Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 175:

² Նույն տեղում, էջ 183:

³ J. Bresol, op. cit., p. 98.

(պահեստի զինվորներ) և բաշխեցուցանելով շրջապատում են գյուղը: Թուրքերին առաջնորդում էր էրզինի կառավարիչ, հայատյաց Մուհամմեդ Ասսաֆ Էսսադը: Գյուղի պաշտպանությունը ստանձնում է Միհրան Մելքոնյանը, որն իրեն դրսևորում է որպես ռազմական գործը հասկացող և բանիմաց առաջնորդ: Հաշվի առնելով հակառակորդի բոլոր քայլերը՝ նա փայլուն դիմադրություն է կազմակերպում: Երեկոյան թուրքերն անցնում են հարձակման: Հայերը պատասխան կրակ են բացում՝ դիպուկ հրաձգությամբ տապալելով հակառակորդին: Մարտը տևում է մինչև գիշերվա երեքը: Զգալի կորուստներ կրելով՝ թուրքերը նահանջում են: Հաջորդ առավոտյան թշնամին հարձակման է անցնում բոլոր կողմերից: Արժանի հակահարված ստանալով՝ նրանք կրկին նահանջում են: Քաջարի պաշտպանները երբեմն համարձակ հակազդրոհների էին դիմում և ծանր հարվածներ հասցնում թշնամուն: Տեսնելով ամրոց-բնակավայրի համառ պաշտպանությունը՝ թուրքերը երկու օր անց թնդանոթներ են բերում, թնդանոթաձգությամբ «ծուխով ու բոմբյուններով լեցունելով բովանդակ մթնոլորտը», գրավում գյուղի մեծ մասը, կտրում խմելու ջուրը, սակայն չեն կարողանում կոտրել հայերի պաշտպանողական կամքը:¹

«Այո, ծարավը Տյորթյուլի պատմության ամենացայտուն դրվագն էր,- գրել է Զ. Եսայանը,- ինն օր ջուրը կտրած էին... փոքրիկ տղաքը մեռեր էին ահռելի տանջանքներով»:²

Ապրիլի 6-ին անգլիական «Դիանա» ռազմանավը մոտենալով ափին և իմանալով եղելությունը՝ թուրքերին առաջարկում է Զայլը գյուղում բանակցել հայերի հետ, իսկ իրենք հանդես են գալիս որպես միջնորդ: Թուրքերը պահանջում են հանձնել ինքնապաշտպանության ղեկավար Միհրան Մելքոնյանին՝ փոխարենը խոստանալով ջուր ու ազատություն, սակայն հայերը կտրականապես մերժում են պատասխանելով. «Մենք չէ թե ուզած անձերնիդ, այլ հետին ծերն չենք կարող հանձնել»: Բանակցություններն ավարտվում են անարդյունք, որից հետո «Դիանան» հեռանում է՝ իր գործն «ավարտված» համարելով, հավատակից հայերին թողնելով թշնամու շրջապատման օղակում, ոչնչացման անմիջական վտանգի ներքո:³ Ծարավ մնալով ավելի քան մեկ շաբաթ՝ հայ քաջորդիները «գիշեր ցե-

¹ Ա. Թողիկ, նշվ. աշխ., էջ 178: Տե՛ս նաև Դ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 221:

² Զ. Եսայան, նշվ. աշխ., էջ

³ Դ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 187:

րեկ թշնամյաց գնդակներուն կը դիմադրեին պահպանելու համար ժողովրդական կյանքն ու պատիվը՝ օրհասի մը երկունքով»:⁴

Առաջին օրերի սարսափից հետո տղամարդկանց են միանում գերանդիներով և նիզակներով զինված 100 երիտասարդ կանայք և աղջիկներ: Ստանալով օժանդակ ուժեր՝ թուրքերը պատրաստվում են գլխավոր հարձակման, հայերը՝ օրհասական դիմադրության: Պատրաստվում է 3000 նիզակ, որով ենթադրվում էր զինել մնացած կանանց և պատանիներին: Բայց պաշտպանության տասներեքերորդ օրը օտարերկրյա հյուպատոսների և միսիոներների միջամտությամբ դադարեցվում է Ղյորթ-Յոլի պաշարումը: Ալեքսանդրեոսի չորս հյուպատոսների կողմից որպես ներկայացուցիչ Ղյորթ-Յոլ ուղարկված ամերիկացի Քենեդու շնորհիվ թուրք խուժանը սկսում է աստիճանաբար ցրվել: Չնայած «բարեկարգություն հաստատելու համար» 520 զինվորներով Ղյորթ-Յոլ ժամանած Նեսիմ բեյը հայերից պահանջում է հանձնել զենքը և մերժում ստանալով հրամայում է ռմբակոծել գյուղը,¹ այնուամենայնիվ, տեղի և շրջակայքի հայությունը փրկվել էր հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ:

Համառ դիմադրությամբ աչքի են ընկնում Սիս քաղաքի հայերը (2000 տուն բնակչություն, 1500-ը՝ հայեր): Այստեղ հայերի նկատմամբ բռնությունները սկսվում են ապրիլի 2-3-ին: Նման իրավիճակը նրանց հարկադրում է դիմել կազմակերպված ինքնապաշտպանության: Ուտքի են կանգնում ծերերն ու պատանիները, աղջիկներն ու կանայք: Բոլորն ապաստանում են վանքում, իսկ ինքնապաշտպանական խմբերը, Ղևոնդ ծայրագույն վարդապետ Թուրսարգյանի և Գյուտ վարդապետի ղեկավարությամբ դիրքեր են գրավում վանքի մատույցներում: Ապրիլի 10-ին 20.000 թուրքեր հարձակման են անցնում պաշտպանության առավել թույլ՝ հարավային կողմից: Միաժամանակ, ոճրագործների մի մեծ խումբ հարձակվում է բերդի ուղղությամբ, փորձում այգիներից ձեղքել պաշտպանության շղթան, բայց հանդիպելով հայերի մահասպիուռ գնդակներին՝ խուճապահար փախուստի է դիմում: Ջախողվում է նաև թուրքերի՝ հյուսիսից քաղաք ներխուժելու փորձը: Հաջող և հմուտ ինքնապաշտպանությունը փաստորեն բեկանում է Սիսը գրավելու բոլոր փորձերը, և մեկշաբաթյա պաշարումից հետո նրանք ճարահատ

⁴ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1850, թ. 16:

¹ Գ. Թերգյան, նշվ. աշխ., էջ 225:

հեռանում են:²

Անօրինակ, խիզախ պաշտպանությամբ կոտորածից փրկվում է 45 տուն և 200 բնակիչ ունեցող Շեյխ-Մուրադը (Շարդե-րը): Որսորդական հրացաններով զինված երեք քաջեր, ողջ բնակչությանը հավաքելով գյուղի կենտրոնում, «գրավելով կարևոր կետերը... այնպիսի արագությամբ էին կրակում, որ հարծակվողները վստահ էին պաշտպանվողների զգալի ուժերի մեջ»:³ Ապա, Տեր Գևորգի գլխավորությամբ, ոտքի է կանգնում ողջ գյուղը: Ուրբաթ և շաբաթ օրերին հայերը բազմիցս հետ են մղում թուրքերի գրոհները: Ստացած հարվածներից ապշահար՝ 20.000-ի հասնող խուժանը չէր համարձակվում շարունակել հարձակումը: Ջարդարարներին վախեցնելու համար պաշտպանները դիմում են խորամանկության. ջրի խողովակի մի անցքը փակում են, մյուսի մեջ վառող լցնում և պայթեցնում, որից հետո թուրքերը զգուշանում են, կարծելով, թե հայերը զինված են նաև թնդանոթներով: Պաշարման հինգերորդ օրը, զինամթերքի սպառումից հետո շարդեցիները ձեղքում են շրջապատման օղակը և անցնում Ադանա:¹

Կոտորածներից փրկվելու համար Բաղչեի հայերը բարձրանում են սարերը, սակայն «նրանց հետևից 20 օր իսկական որս էր շարունակվում»:² Հերոսական ինքնապաշտպանությամբ փրկվում են Հայ գյուղի (Գյավուրթյոյ) բնակիչները, որոնք երեք օր թշնամու գերակշիռ ուժերի դեմ ճակատամարտելուց հետո ձեղքում են պաշարման շղթան և ազատվում:³

Համառ դիմադրություն են ցույց տալիս Հաճընի հայերը: Ջարդերի սանձագերծումից հետո քաղաքում ապաստանել էին նաև հարակից բնակավայրերից: Հաճընցիները Ներսես ծայրագույն վարդապետի ղեկավարությամբ դիմում են ինքնապաշտպանության: Բոլոր կողմերից շրջապատելով քաղաքը՝ թուրք խուժանը և կանոնավոր զորքը անցնում են հարձակման, բազմիցս գրոհում, սակայն հետ են շարժվում փոքրաթիվ հայ խիզախների կողմից: Չնայած դրան, թշնամու օղակը գնալով ավելի էր սեղմվում Հաճընի

² Է. Ոսկերիչյան, Կիլիկյան հուշեր. Զալեա, 1930, էջ 28:

³ Геноцид армян..., стр. 199.

¹ Դ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 220: Տես նաև Ա. Դամբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 33:

² Геноцид армян..., стр. 199.

³ Ա. Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 114:

շուրջը: Վերջանալու մոտ էր հայերի՝ առանց այն էլ սակավ զինամթերքը: Ջենք ու զինամթերք ծեռք բերելու նպատակով նրանք հարձակվում են Վինապահեստի վրա, սակայն անհաջողության են մատնվում: Օգնական ուժեր ստանալով՝ թուրքերը վերսկսում են հարձակումները, բայց կրկին հետ են շարտվում: Այնուամենայնիվ, ուժերը խիստ անհավասար էին, և ինքնապաշտպանության խորհուրդը (Պողոս Ուզունյան, Միհրան Գայան, Համբարձում Էվխանյան, Միսակ Ռեջեբյան և այլք) օգնության հեռագրեր է ուղարկում Ադանայի նահանգապետին, որն իր պատասխանում խոստանում է օգնության ուղարկել Վահկայի հազարապետին: Վերջինս Հաճըն ժամանելուն պես միանում է կողոպտիչներին: Մի կողմ վանելով հուսահատությունը՝ հաճընցիները շարունակում են հերոսաբար մաքառել թշնամու գերազանց ուժերի դեմ, գիտակցելով, որ դրանով կռում են իրենց ազատությունն ու փրկությունը: Տեսնելով, որ անհնար է ընկճել քաջ պաշտպաններին, թուրքերը որոշում են հրդեհել քաղաքը: Հրդեհողին Վահկայի հազարապետը 50 ոսկի է խոստանում: Ապրիլի 14-ին թուրքերը կատաղի գրոհ են ձեռնարկում, բայց վերստին հանդիպում են հայերի փոթորկալի կրակի պատնեշին: Խառն իրավիճակից օգտվելով՝ հակառակորդին հաջողվում է հրդեհել մի քանի տուն, հայերն անմիջապես մարում են կրակը:

Ապրիլի 15-ին Միսիսի հազարապետ Լուբֆի բեյի Հաճըն գալով՝ իրադրությունն աստիճանաբար սկսում է կարգավորվել: Տասներկուօրյա անհավասար մարտերի ընթացքում հայերն ունեին 21 սպանված և 15 վիրավոր:¹

Իրադարձությունների մասնակիցը և դեպքերի ականատեսը գրում է. «Հաճընի ճակատամարտին մեջ ամենամեծ անձնավիրությունը ցույց տվավ ամերիկուհի միսս Ռոզ Լեմպրոթը, որուն կողմն Մերսինի անգլիական հյուպատոսին գրված ամենախիստ հեռագիրներու շնորհիվ էր, որ Հաճընը ազատեցավ»:² Խոսելով Հաճընի հերոսական ինքնապաշտպանության մասին, Ջ. Եսայանն իր «Ավերակներուն մեջ» արժեքավոր աշխատությունում իրավամբ այն կարծիքն է հայտնում, որ Հաճընն «իր անհավատալի պաշտպանությունով, իր վեհանձն ու մարտնչող ոգիով ընդհանուր դժբախտության մեջ այն բացառիկ անկյուններեն մեկն է, որուն մեր ազգա-

¹ Յ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմությունը և շրջակա Գոգան-Տաղի հայ գյուղերը, Լոս Անջելոս, 1942, էջ 573-579:

² Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 240:

յին հպարտությունը պետք ունեն կառչելու»:³

Ապրիլի սկզբներին որոշ հուզումներ են սկսվում Մարաշում: Ապրիլի 5-ին այստեղ են գալիս Ադանայի ջարդի մի խումբ մասնակիցներ և սկսում են հրահրել մահմեդական ազգաբնակչությանը: Ավերվում են Մարաշից ոչ հեռու գտնվող Սարըլար և Կեոք Ճեյիզ գյուղերը: Մեկ օր անց քաղաքի շուկայում թուրքերը հարձակվում են հայերի վրա, վիրավորում տասը հոգու, սպանում իննին: Տեղի թուրք երևելիներից Բայազիդ Ջադե Գատրին կառավարչից պահանջում է անմիջապես միջոցներ ձեռնարկել դրության կարգավորման ուղղությամբ: Խաղաղությունը վերահաստատվում է մասնավորապես այն բանից հետո, երբ թուրքերին տեղեկություններ են հասնում, որ Մարաշում ջարդեր կազմակերպելու դեպքում Ջեյթունի քաջ լեռնականները շարժվելու են իրենց վրա: «Եթե Մարաշի որևէ հայու վնաս մը պատահի, 12 ժամեն Մարաշի վրա հարձակվելով քաղաքը մոխրի կը վերածենք», - հեռագրել էին զեյթունցիները գավառի իշխանություններին: Մարաշցի Տ. Սահակ քահանա Պետրոսյանի հեռագիրը ուղղված զեյթունցիներին, վկայում է, որ «Եթե Ջեյթունի անունն ու սարսափը չըլլար, կարելի չէր, որ Մարաշի մեջ հայ մնար»:¹

Այնուամենայնիվ, գավառում ջարդերը շարունակվում էին. հրդեհվեցին Քիշիֆլիի 70 տները, հարձակման ենթարկվեցին և ավերվեցին Տերե-Քեոյ, Չագր օղլու և բազմաթիվ այլ գյուղեր: 10-12 օր թուրք բազմահազար հրոսակներին դիմադրում է Ֆնտըճագի հայությունը: «Ֆնտըճագին ժայռի գավակ, քաջորդի, գիտցավ ինքզինք պաշտպանել արի դիմադրությամբ մը և պահպանել իր գոյությունը»:² Ցավոք, Ֆնտըճագի հերոսական ինքնապաշտպանության մասին մեզ կցկտուր տեղեկություններ են հայտնի:

Խոշոր բախումներ և ընդհարումներ են լինում 1000 հայ բնակիչ ունեցող Ղարս-Բազարում, որի ինքնապաշտպանությունը կազմակերպում է հայազգի թուրքական ոստիկան Ջին Թորոսը: Ճիշտ է, հարձակումներից մեկի ժամանակ թուրքերին հաջողվում է հրդեհել 60 տուն և 100 խրճիթ, բայց չեն կարողանում գրավել գյուղը:³

³ Չ. Եսայան, Եշվ. աշխ., էջ 181:

¹ Ջեյթունի հոգևոր առաջնորդ Վ. Արշակունու հուշերը (ձեռագիրը մեզ է տրամադրել պատաբան Դ. Պողոսյանը), էջ 29:

² Գր. Դ. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Ջեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 60:

³ Ա. Համբարյան, Կիլիկիայի 1909թ. հայկական կոտորածները, ՊԲՀ, 1988, N 4, էջ 21:

Դժվար է գերազնահատել ինքնապաշտպանության դերն ու նշանակությունը: Ինքնապաշտպանական մարտերի ժամանակ դրսևորվեց հայ ժողովրդի ազատաբաղձ և անկոտրում ոգին, անխոնջ հավատը հաղթանակի նկատմամբ: 1909 թ. հերոսամարտերը մեկ անգամ ևս ապացուցեցին, որ թուրքական արյունոտ յաթաղանից փրկության միակ հույսը զինված, կենաց ու մահու պայքարն է:

ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԱԾ ԹՎԱԿԱՆ
ՈՒ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ
ԵՎ ԶԱՐԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Կիլիկիահայության կոտորածներից անմիջապես հետո թուրքական կառավարությունը սկսեց կեղծել փաստերը և ջարդերի հեղինակներ ներկայացնել հայերին, տուժողներ՝ թուրքերին: Այսպես, Ադանայի նոր կուսակալ Ջիհնի փաշան 1909 թ. մայիսի 1-ին Կ. Պոլիս հղած հեռագրում հաղորդում է, որ «սպանված իսլամներու թիվը 1924 և վիրավորյալներու թիվը 533 է», իսկ «հայերե սպանվածներու թիվը 1455 և վիրավորյալներունը 383 է»:¹ Երիտթուրքական կառավարությունը մեծ ջանքեր էր գործադրում համաշխարհային հասարակայնությանը և միջազգային դիվանագիտությանը համոզելու, որ Կիլիկիայում տեղի ունեցածը հեռու է կազմակերպված լինելուց և դրա մասին միակողմանիորեն դատելը ճիշտ չի լինի: Փարիզում օսմանյան դեսպանությունը Կիլիկիայի եղեռնագործության մասին Ֆրանսիայի բոլոր թերթերին հաղորդել էր, որ «թեև կորուստը 4000 չէ անցած՝ այդ թիվը 20.000 է, նույնիսկ 30.000-ի մոտ կը ներկայացվի: Ասոր բուն նպատակն այլ եղեռնական այդ վերջին դեպքերուն պատասխանատվությունը միայն իսլամներու վրա բեռնելն է: Մինչդեռ Մերսինի և Ատանայի մեջ քննություններ կատարող քրիստոնյա ժողովրդի հոգևոր պետեր կը վկայեն թե՛ հանցանքը երկուստեք էր»:²

Փաստերի կեղծման ու խեղաթյուրման մոլուցքով բռնված երիտթուրքերը տալիս էին իրարամերժ տեղեկություններ: Այսպես, ըստ օսմանյան կառավարության պաշտոնական օրգան «La Turquie»-ի, գոհերի թիվը կազմել է ընդամենը 1.000 մարդ, որոնցից 25-ը մահմեդական: Միաժամանակ ներքին գործերի նախարար Ֆերիդ փաշան հայտարարեց. «Ինչպես կարող էին 30.000 սպանվել, եթե Կիլիկիայում հայկական բնակչությունը 40.000-ից չէր անցնում և այժմ, համաձայն մեր մարդահամարի, 25.000-ը կենդանի են»:³ Նման կեղծիքը նույնիսկ մեկնաբանությունների կարիք չի զգում: Դրանց կեղծ լինելն է վկայում նաև Ռուսաստանի դեսպան Ի. Ջի-

¹ Գ. Աշճյան, նշվ. աշխ., էջ 30:

² Նույն տեղում, էջ 40:

³ F. Duckette, op. cit., p. 80, 85.

նովն իր հաղորդագրություններից մեկում:⁴

Փաստերի խեղաթյուրմամբ էին զբաղվում օսմանյան կառավարության կողմից կազմված պատերազմական ատյանները, որոնցից մեկի հաղորդման համաձայն՝ զոհվել էին 5683 հոգի (1487 մահմեդական և 4196 քրիստոնյա): Մինչդեռ հայ և օտար բազմաթիվ աղբյուրներ հավաստում են, որ զոհերն անհամեմատ ավելի շատ են եղել: Կ. Պոլսի ռուսական դեսպանի 1909 թ. ապրիլի 18-ի հաղորդագրության համաձայն՝ թուրքական յաթաղանից, դեռևս վերջնականապես չճշտված տվյալներով, զոհվել են 15.000 քրիստոնյաներ,¹ իսկ Բեյրութում ռուսական գլխավոր հյուպատոս իշխան Գազարինի ապրիլ 12-ին Ի. Ջինովկին ուղղված հեռագրի՝ զոհերի թիվը հասնում էր 30.000-ի:² Իր հուշերում գրելով, որ Կիլիկիայի կոտորածների ժամանակ կոտորվել են 17.000 հայ և 850 մահմեդական, Ջեմալ փաշան հայտնում է բացարձակապես անհիմն, քննադատության չդիմացող իր կարծիքը. «Այդ թվերը ցույց են տալիս, որ եթե հայերն այստեղ (Կիլիկիայում - Ռ.Գ.) մեծամասնություն կազմեին, ապա արդյունքները հակառակը կլինեին»:³

Հայոց ազգային վարչության քննիչ մասնախումբը ջարդերից անմիջապես հետո մեկնեց Կիլիկիա և չնայած արհեստականորեն բարձրացվող բոլոր խոչընդոտներին՝ աշխատեց հնարավորության սահմաններում ճշտել զոհերի թիվը: Ըստ ծեռք բերած տեղեկությունների, սպանվել էր 22.512 քրիստոնյա, որից 12.839-ը հայ, մնացածը՝ հույն և ասորի: Այս թիվը չի կարելի վերջնական համարել, քանզի, ինչպես ճշմարտացիորեն նկատել է Ա. Համբարյանը, այստեղ հաշվված չեն այն օրամշակները, որոնք գարնան և ամռան ամիսներին Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից Կիլիկիա էին գալիս աշխատելու: «Նրանք չէին գրանցվում որևէ տեղ և, հետևաբար, չէին կարող հաշվի առնվել Հայոց ազգային վարչության քննիչ մասնախմբի կողմից»,⁴ իսկ ինչպես նշել ենք, օրամշակների թիվը Կիլիկիայում հասնում էր 50.000-ի: Ներսես եպիսկոպոս Ղանիեյանը նշում է, որ կոտորածներին առավելապես զոհ գնացին

⁴ АВПР, ф. Канцелярия, МИА, оп. 420, 1909, л. 35, л. 81.

¹ Геноцид армян..., стр. 168.

² АВПР, ф. Канцелярия, МИА, оп. 470, 1909, л. 155, г. 3, л. 8.

³ Записки Аджемаль Пашы, 1913-1919, Тифлис, 1923, стр. 214.

⁴ Ա. Ս. Համբարյան, նշվ. հոդ., ՊԲՀ, 1988, N 4, էջ 25:

օրամշակները:⁵

Եվրոպական աղբյուրները հավաստում են, որ Կիլիկիայի կոտորածների ժամանակ սպանվել են 25.000-30.000⁶ հայեր: Այս տեսակետին են նաև հայ պատմաբանները: Մեր կարծիքով, այդ թիվն էլ չի կարելի վերջնական համարել, քանզի բոլոր տվյալներն էլ քաղված են վերը նշվածներից, իսկ դրանք միայն մասամբ են ճշտորեն արտացոլում իրականությունը: Օսմանյան կառավարությունն արգելում և միտումնավոր կերպով բարդություններ էր ստեղծում, ուստի անչափ դժվար էր մանրակրկիտ հետազոտությունների միջոցով պարզել զոհերի ճիշտ թիվը: Համաձայն որոշ թերթերում հրապարակված հաղորդագրությունների այդ թիվը կազմում էր մոտավորապես 35.000:¹

Խոսելով հայերի կրած կորուստների մասին պետք է հաշվենք այն անմեղ զոհերին, որոնք, չդիմանալով համաճարակներին, տարբեր հիվանդություններին, սովին, գուրկ լինելով օթևանից հարյուրներով մահանում էին: Հ. Թերզյանը հիշում է, որ Ադանայում օրական մահանում էր ավելի քան 100 երեխա: Այնքան շատ էին նման կորուստները, որ նույնիսկ երիտթուրքական «Թանին» թերթը 1909 թ. հունիսի 30-ին հարկադրված խոստովանում էր. «Ատանայի մեջ 532 որբեր բնակարանի և սնունդի պակասուրթնե մեռած են»² (խոսքը, հարկավ, վերաբերում է հայ երեխաներին): Երիցս ճիշտ է Ա. Ադոսսիդեսը, նկատելով, որ զոհերի թվում պետք է հաշվել նաև նրանց, ովքեր կոտորածների պատճառով դարձել էին անաշխատունակ կամ, չդիմանալով ծանր վշտին ու հոգեկան տառապանքներին, խելագարվել էին, ովքեր բռնությամբ մահմեդականացվել էին, այն կանանց ու աղջիկներին, ովքեր ողջ Թուրքիայում վաճառվել էին որպես ստրկուհիներ:³ Չոհերի թվում պետք է հաշվել նաև հազարներով իրենց պապենական օջախները և հայրենիքը լքած հազարավոր հայերին: Նրանք, փաստորեն, նույնպես կորսված էին կիլիկիահայության համար:

Կիլիկիայի բարգավաճ հայությանն այնպիսի հարված հասցվեց, որից նա այդպես էլ չկարողացավ ուշքի գալ: «Ամբողջ Ադանա-

⁵ Ներսես Եպիսկոպոս Դանիելյան. Կաթիլ մը ջուր այրած սրտերու. Կ. Պոլիս. 1912. էջ 15:

⁶ F. Duckette, op. cit., p. 80. 85. Տես նաև J. Bresol, op. cit., p. 105.

¹ Геноцид армян..., стр. 195.

² Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 336:

³ Геноцид армян..., стр. 218.

յի վիլայեթում,- նշել է Ա. Համբարյանը,- թուրքական ոճրագործները, պաշտոնական նվազեցված տվյալներով, կործանեցին 2.323 տուն, 1.429 ամառանոց, 1.002 հյուղ, 500 խանութ, 24 եկեղեցի, 23 ջրաղաց, 16 դպրոց, 14 խան, 3 հյուրանոց, 2 գործարան և այլն: Օսմանյան բանկի ոչ լրիվ տեղեկություններով այդ վիլայեթի հայերի նյութական վնասը կազմեց 5 մլն ոսկի»:⁴ Կասկածից դուրս է, որ այս տվյալները շատ հեռու են վերջնական լինելուց: Ֆրանսիացի պատմաբան Ժորժ Բրեզոլի հաշվումներով՝ նյութական վնասը կազմել է 20 միլիոն թուրքական լիրա,⁵ իսկ Ս. Պարթևյանի տվյալներով՝ միայն Ադանայում ավերվեց 1.190 տուն, 5 դպրոց, 6 եկեղեցի, Տարսոնում՝ 800 տուն, Հասան-Բեյլիում՝ 416, Լափաշլիում՝ 120, Ինջիրլիքում՝ 145, Օսմանիեում՝ 200, Քեսապում՝ 1.500 տուն և այլն:¹ Հայերի երկար տարիների ջանքերով ստեղծված բոլոր բարիքները կողոպտվեցին և յուրացվեցին թուրքերի կողմից:

1910 թ. հունվարի 13-ին Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված նամակում Կ. Պոլսի հայոց պատրիարքը հաղորդում էր. «Կիլիկիո աղետյալ վայրերու կարոտյալներու թիվը 80.000 կը հաշվվի, 7-10.000 երկսեռ որբեր, բազմաթիվ նորատի կիներ այրի և անպաշտպան կը մնան, և թշվառներու այս բազմությունը կորուսած ամեն բան, կը տվայտի կիսամեռ թշվառության մեջ» և որ որբանոցներում տեղավորվել են ընդամենը 4.000 որբեր, որոնցից 1.500-ը՝ հայկական, իսկ 2.500-ը՝ «օտար հաստատությանց կողմից բացված որբանոցներում»:²

Այսպիսին էր կիլիկիահայերի վիճակը: Մերկ, անոթի, անօթևան, հոգեկան տառապանքներից, մարմնական ցավերից տանջահար, հարազատների և մտերիմների կորստի ծանրության տակ կքած, արդարության փակ դարպասները բախելուց հոգնաբեկ մարդիկ, որդեկորույս մայրեր, պատվազրկված կանայք, ապրելու և ապրեցնելու միջոց փնտրող տղամարդիկ, ահա Կիլիկիայի հայության իրական վիճակը:

Կոտորածներից հետո օսմանյան կառավարությունը ձեռնամուխ եղավ խնդրի հետաքննությանը՝ ջարդերի միակ հրահրող և մեղավոր կողմ ճանաչելով հայերին: Զարդերից որոշ ժամանակ անց

⁴ Ա. Համբարյան, նշվ. աշխ., ՊԲՀ, 1988, N 4, էջ 27:

⁵ J. Bresol, op. cit., p. 277.

¹ Ս. Պարթևյան, նշվ. աշխ., էջ. 40:

² ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 17:

ներքին գործերի նախարար նշանակված Թալեաթ փաշան իր հուշերում անդրադառնալով կիլիկիահայության ողբերգությանը՝ գրել է, որ հայերը, օգտագործելով սահմանադրությամբ շնորհված ազատությունը, պետք է «առաջին իսկ հարմար դեպքում հանդես գային կառավարության դեմ և Եվրոպայի միջամտության շնորհիվ հասնեին ինքնավար կառավարության և, վերջապես, անկախության... Ադանայի իրադարձությունները, հուզումները և հանցագործությունները հանդիսանում են նրանց ծեռքի գործը»: Հետևաբար, Թալեաթի դատողությամբ, հայերը նախահարձակ են եղել թուրքերի վրա ձգտելով գրավել Եվրոպայի ուշադրությունը և առաջ բերել նրա միջամտությունը, կամ կոտորել են իրենք իրենց վերոհիշյալ դրդապատճառներից ելնելով: «Սրանով ես չեմ ուզում ասել, շարունակում է դեպքերի «անաչառ» վերլուծողը, որ մահմեդական բնակչությունը չի մասնակցել ջարդերին: Իմ նպատակն է ապացուցել, որ այդ սադրանքը (կիլիկիահայության կոտորածները - Ռ.Գ.) հրահրվել էր հայերի և բուլղարացիների կողմից՝ զուտ քաղաքական նկատառումներով»:¹

Ապա Թալեաթը լկտիորեն հայտարարում է, որ Ադանայի ջարդերի՝ հայերի կողմից հրահրման փաստը հաստատվում է հայերի ցուցմունքներով, մասնավորապես Հ. Պապիկյանի խոստովանությամբ: Սակայն վերջինս հիմնավորում է հենց հակառակը՝ նշելով նաև երիտթուրքերի մեղավորությունը կոտորածների կազմակերպման գործում:

1909 թ. դեկտեմբերի 31-ին հայոց հայրապետին ուղղված նամակում Կ. Պոլսի հայոց պատրիարքը մասնավորապես նշում է. «Պատերազմական ատյանների առաքումն դեպի արկածյալ վայրերը անդորրությունը վերահաստատելու և հանցավորները պատժելու հույսը կը ներշնչեր, բայց մեծ եղավ մեր զարմանքը, երբ Կիլիկիո զանազան վայրերեն մեզ ուղղված գրեր կը գուժեին ոչ միայն ոճրագործներու մեծավ մասամբ անպատիժ մնալը, այլև նույն իսկ արկածյալ հայերեն շատերու բանտարկվիլը՝ մտացածին և մտապատիր զրպարտություններով և ցավալի է լսել... Ատանայի մեջ կախաղան կը հանվեին քանի մը թրքերու հետ նաև յոթն հայեր»:²

Ձերբակալվել էին ինքնապաշտպանական մարտերի ղեկավարներ Ներսես վարդապետը, Միհրան Մելքոնյանը, Սահակ քա-

¹ Talat Pasanen Hutralari, Istanbul, 1958, p. 13.

² ՀՀ ԿՊՊԱ. ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 1:

հանան և այլք, որոնք երկար ժամանակ մնացին բանտարկված: Ո՞վ գիտե, ներքին գործերի նախարարի գրությունը հայոց պատրիարքին, թե՛ «...Ատանայի ցավալի անցքերու հեղինակներուն և թելադրողներուն հանդեպ օրինաց համաձայն և օրինակ այլոց պատժելու ամեն կարելի ջանքերը ի գործ դնելը դադրած է, և թե միանգամայն ամեն կողմե թե՛ օսմանյան տարրերուն կատարյալ համերաշխությունը պահպանելու և թե՛ ապագային ալ նման ցավալի դեպքերուն ասպարեզ չտալու համար ազդու միջոցներ ձեռնառած է»:³ զուցե նկատի ունենալով հայերի՝ նկատմամբ կիրառվող «ազդու միջոցները» և բռնությունները: Այո, բռնությունների ու պատիժների ենթարկվեցին բազմաթիվ հայեր լոկ այն բանի համար, որ հանդգնել էին պաշտպանել իրենց երեխաների կյանքը, կանանց պատիվը: Իսկ հայր. թուրքի գազանային տրամաբանությամբ չունենալով իրավունքը, քանզի «իր կնոջ կամ քրոջ առևանգողներուն հետապնդող հայր հանցավոր կը նկատվի: Չորք Մարգվանի հայությունը թույլ չի տալու կոտորել զինքը, կողոպտել իր գոյքը և վաճառել իր տունն ու տեղը և ահա թնդանդոթները կ'որոտան, ինքնապաշտպանության դիմող օսմանցի հայր ապստամբ նկատելով»: Որպես հայերի ապստամբության նախապատրաստվելու ապացույց, թուրքերը լուրեր էին տարածում, թե հայերից խլվել են բազմաթիվ թնդանդոթներ, տարբեր տեսակի զենքեր: «Մեղուն» իրավունք ունենալով կսկիծով և անսքող հեզմանքով գրելու. «Դժոխային մեքենաներ ու ջուրի խողովակե շինած թնդանդոթներ ձեռք անցուցինք, կ'ըսեն ուրիշները և այնքան համոզիչ շեշտերով, որ քիչ մնաց ռազմական այս ստեղծագործության առջև քրուբ (նկատի ունի գերմանացի հայտնի արդյունաբերող Կրուպպին - Ռ.Գ.) սնանկանար»:¹

Ավելի ուշ, անհերքելի փաստերի և ապացույցների ճնշման ներքո, կառավարությունը հարկադրված էր խոստովանել հայերի անմեղությունն ու պատասխանատվության կանչել ջարդարարներից ոմանց: Կ. Պոլսից Փարիզի «Թանին» թերթին հղած հաղորդագրության համաձայն՝ օգոստոսի 11-ին մեծ վեզիրի կողմից հրապարակված մի շրջաբերականով հայերի վրայից «վերցվում է Ադանայում կոտորածի տեղիք տալու մեղադրանքը: Այդ պատասխանատվությունը նա ձգում է ադմինիստրացիայի վրա. որ կատարած չի եղել իր պարտականությունները»: Ինչ վերաբերում է Կոլիկիայի կո-

³ Նույն տեղում, թ. 3:

⁴ Տես Կոհակ, 13-ը հունիսի (N 3). 1909:

տորածներն իրագործողներին (Զևադ Բեյ, Սուստաֆա Ռեմզի, Աբդուլ Գատեր, Ասաֆ բեյ, Իսմայիլ Սեֆա, Իհսան Ֆիքրի և այլք), ապա նրանք ենթարկվեցին սուկ «ծաղրական պատիժների» փաստորեն անպատիժ մնալով:² Նույնն է հավաստում նաև Ի. Զինովևն իր հաղորդագրության մեջ, նշելով, որ «խառնակության իսկական մեղավորները պատասխանատվության չենթարկվեցին»: Մեղադրելով օսմանյան իշխանություններին կողմնակալության, դատավարությունների փակ անցկացման համար, նա նկատում է. «Ահա այսպիսին է երիտթուրքերի վերաբերմունքը արդարության նկատմամբ»: Որպես դեսպան և քրիստոնյա հանդես գալով հայերի պաշտպանության դիրքերում, Ի. Զինովևն իր պարտքն է համարել այդ ամենի վրա հրավիրել մեծ վեզիր Հուսեյն Հիլմի փաշայի ուշադրությունը, սակայն վերջինս ոչինչ չի ձեռնարկել:¹

Դեռ ավելին, երիտթուրքերը իսկական հանցագործների փոխարեն 15 հոգու (9-ը մահմեդական, 6-ը հայ) մեղադրեցին ջարդերի հրահրման մեջ և մահապատժի ենթարկեցին: Ապա ցանկանալով միջազգային հանրությանն ապացուցել, որ ոչ ոք չի խուսափի արդարադատության ձեռքից, որպես «խառնակությունների» կազմակերպիչներ ձերբակալեցին 213 հայերի (որոնց մեջ ինքնապաշտպանական մարտերի բազմաթիվ կազմակերպիչների) և 149 թուրքերի՝ տարբեր պատիժների ենթարկելով նրանց: Նման «կտրուկ» միջոցներով էր գործում թուրքական «արդարադատությունը»: Այս ամենից հետո Կ. Պոլսի հայոց պատրիարքը վեհափառ կաթողիկոսին հղած նամակում իրավունք ուներ գրելու. «Կսպասեինք ազգովին և լի հույսով, որ օսմանյան սահմանդրության հռչակումեն ետքը, որ քանդեց հայոց արյամբ ողողված բռնապետական նախորդ դրությունը, այլևս վերջ կգտնեն այդ անլուր չարչարանքները, սակայն ցավոք սրտի կը հարկադրվինք հաստատելու, որ իրաց վիճակը հայոց նկատմամբ որևէ նպաստավոր փոփոխություն չկրեց, և Ատանայի ահավոր կոտորածով սկսավ այնպիսի նոր շրջան մը, որ անպակաս եղան ամենուրեք նորանոր չարագործությունք»:²

Կիլիկիահայության կոտորածների կազմակերպման և կազմակերպիչների վերաբերյալ պատմագրության մեջ կան տալիքեր

² ՀՀ ԿՊՊՍ ֆ. 57, ց. 5, գ. 14, ք. 2:

¹ АБПР, ф. Канцелярии МПВ, он. 170, т. 1909, л. 33, а. 192-194

² ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Իզմիրլյան կաթողիկոսի արխիվ, ց. 2, բլր. 1, փավ. 521:

կարծիքներ՝ մեղադրող և երիտթուրքերին, և Աբդուլ Համիդին: Այս տարակարծություններն առկա են նաև ժամանակակիցների և դեպքերի ականատեսների հուշերում: Ռուսաստանի դեսպան Ի. Ջինովկը, փոքր ինչ զգույշ՝ իր կարծիքներում, հաղորդել է արտաքին գործերի նախարարություն, թե «այստեղ կասկածներ են ծագել, որ Ադանայի վիլայեթում հակաքրիստոնեական շարժումները հրահրվել են սուլթան Աբդուլ Համիդի գործակալների մեքենայություններով, որը, նախագգալով իրեն սպառնացող դժբախտությունը, մտածում էր, որ սկսված շարժումը կպահանջի տերությունների միջամտությունը, որն էլ կխանգարի իր թշնամիների մտադրությունների իրականացմանը (այսինքն սուլթանի տապալումը երիտթուրքերի կողմից . Ռ.Գ.):»³

Գերմանացի հայտնի հասարակական գործիչ, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքիայում գտնվող մարշալ Լիման ֆոնդ Սանդեսի թարգմանիչ Հենրիխ Ֆիրբյուխերը 1930 թ. հրապարակված իր գրքում կիլիկիահայության ջարդերի կազմակերպիչ է համարում Աբդուլ Համիդին, գրելով. «Եվ այդ մարդը բազմիցս, վերջին անգամ 1909 թ. հայերի ոչնչացման հրամաններ է տվել»:⁴

Նշենք, որ ժամանակակիցների մեծ մասը Կիլիկիայի կոտորածների կազմակերպիչներ էին համարում Աբդուլ Համիդին և նրա պաշտոնյաներին նախ և առաջ այն պատճառով, որ դեռևս պատրանքներ էին տածում երիտթուրքական «հեղափոխության» նկատմամբ, և երկրորդ՝ ջարդի օրերին սուլթանի կողմնակիցները, հակասահմանադրական շարժում բարձրացնելով, գրավել էին մայրաքաղաքը և զավթել իշխանությունը, սակայն չմոռանանք, որ Ադանայի վիլայեթում և այլուր թուրքիայում փաստական իշխանությունը գտնվում էր երիտթուրքերի ձեռքում: Այնքան մեծ էր պատրանքը սահմանադրական կարգերի նկատմամբ, որ 1909 թ. ապրիլի 19-ին օսմանյան խորհրդարանի նիստում պատգամավոր Վարդգեսն ասել է. «Հայտնի է, որ այս դեպքն ալ (Կիլիկիայի ջարդերը - Ռ.Գ.) Կ. Պոլսո դեպքեն (հակասահմանադրական խռովության - Ռ.Գ.) հետ միևնույն ատեն ծագում առավ, ուրեմն միևնույն անիծյալ անձին գրգռումն են այս երկու դեպքերն ալ: Եթե Սելանիկի բանակը չի

³ ДВНП, ф. Канцелярия МИА, оп. 470, г. 1909, л. 33, л. 21.

⁴ Е. Фирбюхер, указ. соч., стр. 18.

հասներ թերևս ուրիշ տեղեր այլ գրգռեր»:²

Տուրք տալով վերոհիշյալ կարծիքներին՝ ռուս պատմաբան Վ. Ա. Գուրկո-Կրյաժինն իր «Հեղափոխությունների պատմությունը Թուրքիայում» աշխատության մեջ գրում է. «15-20.000 հայեր կոտորվեցին հակահեղափոխության պահին Կիլիկիայում. այս է «արյունարբու սուլթանի» մռայլ տիրապետության վերջին հանրագումարը»:³ Նման դիրքորոշում է ի հայտ բերում նաև անգլիացի պատմաբան Բ. Լյուիսը. «Հետադիմական շարժումը միայն Ստամբուլում չսահմանափակվեց: Կասկածելի զուգադիպությամբ խռովության ալիքը տարածվեց Անատոլիայում: Իրադարձություններն առանձնապես վատ ընթացք ստացան Ադանայի շրջանում և իրենց գագաթնակետին հասան հազարավոր հայերի կոտորածի ժամանակ»:⁴

Կոտորածների ընթացքի և կազմակերպիչների հարցին առաջին արձագանքողը եղել է ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան մամուլը, սակայն, հարկ է նշել, որ մամուլում հրապարակված ոչ բոլոր հաղորդագրություններին ու հոդվածներին պետք է հավատ ընծայել որպես հավաստի աղբյուրի, քանզի այնտեղ իրենց արտացոլումն են գտել ժամանակի շունչը, ոգին, տատանումները: Բացի դրանից, պատմական մի որևէ դեպքի և իրադարձության գնահատման համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ, որի ընթացքում գիտական շրջանառության մեջ դրված մինչ այդ անհայտ փաստերն ու արխիվային վավերագրերը հետազոտողին հնարավորություն են տալիս ճշտորեն կողմնորոշվել իրադարձությունների ու երևույթների թոհուրեհում:

Այսպես, 1909 թ. միայն մեկ թերթի տարբեր համարներում, կապված ստացված տեղեկությունների հետ, կիլիկիահայության սպանդի կազմակերպիչների վերաբերյալ կան իրար հակասող և հերքող հոդվածներ: Թիֆլիսի «Գործ» օրաթերթի N 72-ում այդ կոտորածներն ընկալվում են որպես «մութ և ոճրական ուժերի գործ»,¹ իսկ N 79-ում, «Իթթիհատի գործելակերպը» հոդվածում նշված է, որ «բռնակալական շրջանի ամենատիպիկ ներկայացուցիչները, կամայականության, սանձարձակության ամենաեռանդուն գործիչները՝ վալիներից, մյութեսարիֆներից սկսած մինչև ամենահետին գայմա-

² Տես Դ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 593:

³ В. А. Гурко-Кряжин, История Революции в Турции, М., 1923, стр. 50.

⁴ В. Lewis, The Emergence of Modern Turkey, London, 1961, p. 212.

¹ Գործ, 10 ապրիլի (N 72), 1909 թ.:

գամը, մյուսիսն ու զապթիան-իթթիհատական են դարձած»:² Կարելի է եզրակացնել, որ եթե բոլոր պաշտոնյաները փաստորեն «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներն են և այնքանով, որքանով Կիլիկիայի կոտորածները կազմակերպվել են կենտրոնական կառավարության ցուցումով և տեղական իշխանության ղեկավարությամբ, հետևաբար, կիլիկիահայոց եղեմը երիտթուրքերի համախալամականության քաղաքականության անկյունաքարն էր, որի հիմքը դրվեց 1909 թ. ապրիլ ամսին:

Նույն թերթի մեկ այլ համարում տպագրված հաղորդագրությունը պնդում է. «Բոլոր տեղեկությունները ցույց են տալիս, որ ընդհարումներն առաջացրել են Համիդի և ռեակցիայի գործակալները»:³ Այսպիսի հաստատ համոզումով հրապարակված հաղորդագրությունն անհրաժեշտ է վերապահորեն ընդունել, որովհետև երիտթուրքերը Համիդի գահընկեցությունից հետո, բնական է, պետք է աշխատեին պատասխանատվության իրենց բաժինը գցել տապալված սուլթանի և նրա վարչակարգի վրա, որն էլ իր արտահայտությունն է գտել մամուլում:

Այնուամենայնիվ, դեպքերի ականատեսների, թեկուզև վերապրածի անմիջական ազդեցության ներքո գրված հուշերը կարևոր են այնքանով, որքանով որ միայն նրանց մոտ է պահպանված դեպքերի ընկալման անմիջականությունը, մանրամասնությունների իմացությունը և ճշմարիտ պատկերումը:

Ջարդերի ականատես Հ. Աշճյանը գրում է. «Ատանայի ջարդը տեղական ու պատահական դեպք մը չէր, այլ Օսմանյան կայսրության գլխավոր վարիչներուն կողմեն ծրագրված ու գործադրված կարգադրություն մըն էր. Ատանայի ջարդը հայությունը կոտորակելու և հատցնելու դիվային ծրագրին և հայաջինջ քաղաքականության սկզբնական քայլն էր»: Նա կազմակերպված ջարդերի պատասխանատու է համարում թուրքական կառավարությանն ընդհանրապես, որը մեղքը ցանկանում էր բարդել հայերի վրա, որոնք, իբր, ցանկանում էին վերականգնել «բռնապետական հին կարգերը»:¹

Որ երիտթուրքերն էին կոտորածների անմիջական կազմակերպիչներն ու հրահրողները, պարզորոշ երևում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի Ադանայի մասնաճյուղի շրջակա 18

² Նույն տեղում. 18 ապրիլի (N 79), 1909 թ.:

³ Գործ, 28 ապրիլի (N 86), 1909 թ.:

¹ Հ. Աշճյան, նշվ. աշխ., էջ 114:

բնակավայրերը հղած նույն բովանդակությամբ հեռագրից. «Կեով-տերեւյան 300 հայ զինյալ ֆետայիներով ձեր գյուղին վրա հարձակում պիտի գործեն և տեղացի հայերուն միանալով՝ ջարդ պիտի ընեն: Դեռ անոնք չեկած դուք պետք եղածը ըրեք»:² Սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ կոտորածները սկսելու հրաման:

Ընդունենք, որ ջարդը կազմակերպվել էր նաև հին վարչակարգի պաշտոնյաների, Աբդուլ Համիդի արբանյակների կողմից, բայց երբ թուրք խուժանը սկսեց հայերի կոտորածը՝ նրան անմիջապես միացան երիտթուրքական պարագլուխները: Կոտորածների՝ երիտթուրքերի կողմից կազմակերպումն է վկայում նաև հյուպատոսներից մեկն իր հեռագրում. «Ինչպես երևցավ մինչ ցարդ գլխավոր վայրերուն մեջ, այս կոմիտեին («Միություն և առաջադիմություն» - Ռ.Գ.) անդամները գործոն դեր մը առած են աղետին կազմակերպության մեջ,- ինչպես Ատանա՝ Իսսան Ֆիքրի և իր ընկեր Իսմայիլ Սեֆան, նույնպես Տարսոնի մեջ քլուպին նախագահը անձամբ զենք բաժնած են խուժանին», գործելով Սելանիկի և Կ. Պոլսի երիտթուրքական կոմիտեներից ստացված հրահանգների համաձայն:¹

Երիտթուրքերին ջարդերի միակ կազմակերպիչ է դիտում նաև թուրք պատմաբան Մուրադ Բեյը: Որպես իր կարծիքի հիմնավորում նա գրում է, որ Աբդուլ Համիդին ձեռնադրելու չէր կազմակերպել Կիլիկիայի կոտորածները, քանզի «նախապես հայերու նկատմամբ կազմակերպված ջարդերը բոլոր քաղաքակիրթ աշխարհը սուլթան Համիդի դեմ դարձուցած էին, այն աստիճան սաստկությամբ, որ պաշտոնապես հայտարարվեցավ սուլթան Համիդի, որ եթե անգամ մըն այլ ամենաթեթև եղանակով փորձ մը ըլլա հայերը ջարդել, ինք իսկույն գահընկեց պիտի ըլլա առանց այլևայլի», ուստի եթե այն օրերը Աբդուլ Համիդի վրա «հարձակող կամ հարձակելու պատրաստ մարդիկ կային՝ օրինական տրամաբանությամբ Ատանայի եղեռնին կապին ծայրը դեպի այդ մարդոց ձեռքը պետք է փնտրել»:² Մարտի 31-ին Կ.Պոլսում սկսված հակասահմանադրական շարժումը նա համարում է երիտթուրքերի կազմակերպածը, որը հետապնդում էր մեկ նպատակ. Եվրոպայի ուշադրությունը հրավիրել կոտորածների վրա, այն վերագրել սուլթանին և նախապատրաստել նրա գահընկեցությունը:²

² Զ. Աշխյան, Եզվ. աշխ., էջ 150:

¹ Զ. Թերզյան, Եզվ. աշխ., էջ 683:

² Զ. Թերզյան, Եզվ. աշխ., էջ 806:

Երիտթուրքերի մեղսակցության գուցե ամենամեծ վկայությունը օսմանյան խորհրդարանի և իթթիհատի անդամ Հակոբ Պապիկյանի (նա հատուկ հանձնաժողովի կազմում - Հակոբ Պապիկյան, Հարություն Մոստիճյան, Յուսուֆ Քեմալ և Ֆարիզ բեյ - Կիլիկիա էր գնացել՝ հետաքննելու սպանդի պատճառները և պարզելու մեղավորներին) «Տեղեկագիրն» է Կիլիկիայի կոտորածների վերաբերյալ: Նրա խիստ անաչառ և անհերքելի փաստերի հիման վրա գրված փաստաթղթում հին վարչակարգի հետ միաժամանակ ծանրակշիռ մեղադրանքներ են ուղղվում իր իսկ կուսակցության երեսին, որի համար էլ Պապիկյանը հատուցեց կյանքով: Եվ եթե երջանիկ պատահականության շնորհիվ նա իր «Տեղեկագրի» սևագիրը հանձնած չլիներ «Թայմս» թերթի թղթակցին, ապա սերունդների համար անվերադարձ կորած կլիներ այդ արժեքավոր փաստաթուղթը: Մերկացնելով հին վարչակարգի պաշտոնյաներին, որոնք մտածում էին, որ «նոր ռեժիմին դեմ հաջողությամբ հարձակելու համար նախ պետք է հայերը բնաջնջել», քանզի հայերն իրոք նվիրված էին սահմանադրությանը, Հ. Պապիկյանը համարձակորեն ցույց է տալիս նաև երիտթուրքերի մասնակցությունը կոտորածների կազմակերպմանը. «Վերջացնել է առաջ ստիպված եմ ամենախոր ցավով ավելցնելու, որ Իթթիհատ և Թերաքքը կուսակցության անդամները Ադանայի վայրագ եղերգության կազմակերպման և գործադրության մասնակցած են»:¹

Ավելացնենք նաև, որ ջարդերից մի քանի օր առաջ Ադանայի երիտթուրքական օրգան «Իթիտալ» թերթի կողմից կազմակերպված «միթինկի մը մեջ բոլոր իսլամ դասակարգերը - պաշտոնյա, կրոնական, զինվոր և գործավոր - կ'աշխատեն զանգվածային հարձակման մը պատրաստելու համար», որը չտեսնելու էր տրվում տեղական իշխանության կողմից:²

Կիլիկիահայության կոտորածներն իրենց վրա բևեռեցին ոչ միայն հայ և թուրք մտավորականության, ժողովրդական լայն զանգվածների ուշադրությունը, այլև բարձրացրին համայն աշխարհի առաջադեմ հասարակայնության բողոքի ծայրը երիտթուրքերի վայրագության դեմ: Այս հարցին անդրադարձած Եվրոպական պատմաբանների մեծ մասն իրավացիորեն գտնում է, որ սահմանադրական կարգերի հանդեպ հայերի հավատարմությանը երիտթուրքերը պա-

¹ Տեղեկագիր Հակոբ Պապիկյանի, էջ 42:

² Նույն տեղում, էջ 25:

տասխանեցին «Ադանայի կոտորածով, որով սկիզբ դրվեց պատմության մեջ երբևէ զրանցված ամենասարսափելի ջարդերի շարքին»:³ Անդրադառնալով կիլիկյան արհավիրքին՝ գերմանացի գիտնական Է. Վերները հանգել է այն ճիշտ եզրակացությանը, որ երիտթուրքերը Հայկական հարցի վերջնական լուծման ճանապարհին Ադանայի կոտորածը դիտում էին որպես փորձ:⁴ Ինչպես նշել է Հ. Գիբբոնսը՝ «Ադանայի ջարդը առաջին փորձն էր նրանց կողմից, ովքեր յուրացրին Աբդուլ Համիդի քաղաքականությունը և միջոցառումները, երբ նրանք հափշտակեցին հայերին բնաջնջելու նրա գաղափարը: Այդ օրերին մեկից ավելի երիտթուրքերից լսել եմ, որ Հայկական հարցին վերջ տալու լավագույն ձևը նրանց ոչնչացումն է»:⁵

Քննարկելով կոտորածների կազմակերպիչների հարցը՝ անգլիացի պատմաբան Ֆ. Դաքթերը նկատում է. «Մի ռուպե պատկերացնենք, որ Աբդուլ Համիդն ինքն աղբյուր ու հեղինակ էր Ադանայի ողբերգության, այդ դեպքում ինչո՞ւ սահմանադրական կենտրոնական կառավարությունը չփորձեց անմիջապես կասեցնել շարժումը: Ինչպե՞ս պատահեց, որ Աթիլ բեյը, այն ժամանակվա ներքին գործերի նախարարը, իր հանրահայտ պատմական հեռագրով (պաշտպանել օտար հիմնարկություններին) Ադանայի հանցագործ ամբոխին հասկացնել տվեց, որ կարող են շարունակել» և որ «ժամանակի հետ ամեն ինչ բացահայտվեց և պատասխանատվությունը հավերժ խարանվեց կառավարության և իթթիհատականների ձակատին»:¹

Կոտորածների՝ երիտթուրքական կառավարության կողմից կազմակերպումն ու իրականացումն է հավաստում նաև իթթիհատի ազդեցիկ անդամ Մևլան Չադե Ռիֆաթը: Նրա վկայությամբ այն ժամանակ, երբ Կ. Պոլսում սկսվել էր համիդյան հեղաշրջումը, երիտթուրքերի Ադանայի մասնաճյուղը կենտրոնից ստացած հրամանի համաձայն «Կիլիկիո, մասնավորապես Ատանայի մեջ ընդհանուր ջարդ մը պատրաստելու սկսած էր»:² Աշխարհահռչակ արևելագետ Յոզեֆ Մարկվարտը նշելով, որ երիտթուրքերն առաջնորդվում էին «չեն լինի հայեր, չի լինի և Հայկական հարց» կարգախոս-

³ J. Morgan, The History of Armenian People, Boston, n. p., p. 306.

⁴ Германские источники о геноциде армян, т. 1, стр. 64.

⁵ Բ. Գիբբոնս, указ. соч., стр. 66.

¹ F. Duckette, Turkish Atrocities..., p. 51.

² Մևլան Չադե Ռիֆաթ, Իթթիհատի հայաջինջ ծրագրերը և թուրքական հեղափոխության մութ ծալքերը, Բեյրութ, 1938, էջ 141:

սով, եզրակացնում է. «Ադանայի սարսափելի ջարդը ցույց տվեց, որ երիտթուրքերը, որոնք տարօրինակ կերպով Եվրոպայի հասարակական կարծիքի առջև ազատամիտների համբավ էին ձեռք բերել, իրենց ինքնակամ դաժանությամբ ոչնչով չեն զիջում մեծ դահիճ Աբդուլ Համիդին»:³

Սակայն չի կարելի միանշանակ պնդել, որ Կիլիկիայի կոտորածները կազմակերպվել են միայն երիտթուրքերի կողմից և որ Աբդուլ Համիդն ու նրա վարչակարգը անմասն են ջարդերից, քանզի Համիդը Կիլիկիայում ջարդեր նախապատրաստում էր դեռ 1906-1907 թթ., իսկ նրա գործակալները ընդհարումներ են հրահրել նաև 1909 թ.: Ադանայի կոտորածների մասին իր բարեկամ ոմն Փափագյանին ուղղված նամակում Հ. Աշճյանն իրավացիորեն նկատել է. «Մեր տեսածին համաձայն ժեռն (երիտասարդ) և հին (ծեր) թուրքերին միջև, բացի իրենց անունեն, ուրիշ տարբերություն չկա... երկուքն ալ կը խորհին, թե Թուրքիա՝ նախ թուրքերուն և իսլամներուն համար է»:¹ Իրականությունը թաքնված է փաստորեն հենց այս տողերում: Կիլիկիայի կոտորածները կազմակերպվեցին ինչպես երիտթուրքերի, այնպես էլ հին վարչակարգի պաշտոնյաների կողմից: Հայաջինջ ծրագրերի իրականացման գործում «Միություն և առաջադիմություն» կուսակցության ձգտումները համապատասխանում էին համիդյան ռեժիմի պաշտոնյաների նպատակների հետ:

Կոտորածներից ամիսներ անց իրադրությունը Կիլիկիայում շարունակում էր լարված մնալ, մթնոլորտը՝ շիկացած և օդում կախված ջարդի սպառնալիքով: Թուրքական մոլեռանդությունը դեռևս հագուրդ չէր ստացել հեղված արյունից: Անընդմեջ հարձակումներ էին տեղի ունենում հայերի վրա, հարձակումներ, որոնց նախաձեռնությունը շատ հաճախ պատկանում էր թրքուհիներին: Կ. Պոլսի «Կոհակ» շաբաթաթերթը 1909 թ. մայիսի 30-ին հրապարակած հոդվածում հաղորդում է, որ «Սահմանադրության հռչակումեն ի վեր մեր թշվառացած հայրենիքը ոչ միայն իր որդիներու ստեղծագործ ու շինարար աշխատանքի պտուղները վայելելու բաղդը չունեցավ, այլ սարսափի, կոտորածի... կյանք մըն ալ անցուց և այժմ չգիտե, թե ի՞նչ պիտի գա իր գլխին»:²

Քննադատելով երիտթուրքական կեղծ սահմանադրություն-

³ Տե՛ս Ռ. Գ. Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 126:

¹ Հ. Աշճյան, նշվ. աշխ., էջ 60:

² Կոհակ, Կ. Պոլիս, 30-ը մայիսի (N 1), 1909 թ.:

նը, տեսնելով իր աշխատասեր և ստեղծագործ ժողովրդի վիճակը՝ Ա. Թեոդիկն արդարև հիմքեր ուներ գրելու. «Աշխա՛րի աշխատողին: Սուտ խոսք հին փիլիսոփայության: Աշխա՛րի հզորին, խղճմտանքե զուրկ անձին, կեղեքողին, կողոպտողին, վայելողին, աշխարհի՛ ա- սոնց մեջ լիուլի՛ հաջողողին: Ահավասի՛կ դարուս փիլիսոփայությու- նը»:³

³ Ա. Թեոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 10:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԿԻՒԿԻԱՅՈՒՄ 1900-1908թթ.	3
ԿԻՒԿԻԱՎԱՅՈՒԹՅԱՆ 1909 թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ	19
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԿԻՒԿԻԱՅՈՒՄ 1909 թ.....	35
ԿԻՒԿԻԱՎԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԱԾ ԹՎԱԿԱՆ ՈՒ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ԵՎ ԶԱՐԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ.....	43

ՌՈՒԲԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կիլիկիահայությունը 20-րդ դարի սկզբին

РУБЕН ГАСПАРЯН

Киликийские армяне в начале 20-ого века

Ծավալը՝ 3,5 մամուլ

*Գիրքը տպագրվել է Երևանի «Հայք» տպարանում
(Երևան – 19, Մարշալ Բաղդասյան 24Դ)*

[450m]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0065649

A II
86877